№ 287 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1913 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 287

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.

Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տ ե լ ե ֆ ո ն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տ ե լ ե ֆ ո ն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ԱՌԱՋԻԿԱՅ 1914 Թ. ՀԱՄԱՐ
43-ՐԴ ՏԱՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
0 րուբ.	9 րուբ.	8 րուբ.	7 րուբ.	6 րուբ.	5 րուբ.	4 րուբ.	3 րուբ.	2 րուբ.

Դեկտեմբերի 1-ից մինչեւ յունվարի 1-ը 85 կոպ.

Ամերիկայի բաժանորդները պէտք վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժա- ները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժա- ները՝ 120 ղրուշ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների ար պէտք վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պետիտ) 20 կ., վերջին երեսի 10 կ.։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամա- դրոշմ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին պագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակի» ՏԱՐԵԿԱՆ այն բաժանորդները, որոնք 1914 թ. համար (սկսած նվարի 1-ից 1914 թ.) ՄԻԱՆՈՒԱԳ կամ ՄԱՍ-ՄԱՍ վճարած կունենան 10 բլի բաժանորդավճարը, կը ստանան ՁՐԻԱԲԱՐ հետեւեալ գրքերից ՄԷԿՆ ՄԷԿԸ.

1) Գր. Արծրունու աշխատութիւններ 1865–1871 թ.

Այդ գրքի մէջ զետեղված են Գր. Արծրունու այն խոշոր ու մանր յօդուածները, որոնք ս են տեսել մինչև «Մշակ» լրագրի հրատարակութիւնը։ Գիրքը բաղկացած է 408 էջից։

2) Վրձնի (Ա. Բահաթրեանի) Մանրանկարները, I և II հատոր։

«Մանրանկարները» ամփոփում են իրանց մէջ հայկական հասարակական կեանքի և նրա տայայտութիւնների նկարագրութիւններ։ Գիրքը բաղկացած է 520+472 էջից։

Մինչև ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ը բաժանորդագրվածները կը ստանան ԵՐԿՐՈՐԴ իրքը, իսկ նրանից յետոյ բաժանորդագրվողները—ԱՌԱՋԻՆ գիրքը։

Արտասահմանեան բաժանորդները պէտք է ուղարկեն գրքերի ճանապարհածախսը, րի քանակը կը յայտարարվի իր ժամանակին։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction u journal „MSCHAK".

ՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

„ՄՇԱԿԻ" ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում ն մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեան գրասենեակը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներն վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

Կովկասի Հայոց Բարեգ. Ընկերութեան խորհուրդը
Հրաւիրում է պ. պ. անդամներին Ընկերութեան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
րը կայանալու է չորեքշաբթի, դեկտեմբերի 25-ին, երեկոյեան ժամը 7-ին Ընկերութեան դահլիճում (Աբաս-Աբադսկի հրապարակ, № 7, սեփ. տուն)։
ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ՝
1) Կենտրոնի և ճիւղերի 1914 թ. նախահաշիւների քննութիւնն ու հաստատումը։
2) Ուսուցչական ֆօնդի հրահանգի մի քանի կէտերի պարզաբանութեան մասին։
3) Ընթացիկ հարցեր։
(չ.) աա. 1207. 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հինգշաբթի, դեկտեմբերի 26-ին
Հայոց Դրամատիկ. Ընկ. խումբը
կը ներկայացնէ—Շնիցլերի
ՍԻՐԱԽԱՂ
ոմեդիա 3 գործ. Թարգմ. Մ. Մանուէլեանի
Մասնակցում են.—տ. տ. Արուսեակ, Աշխէն, Սեւումեան, պ. պ. Բերոյեան, Զարիֆեան, Մանուէլեան, Սեւումեան։
Սկիզբը երեկ. ժամը 8-ին։
Ռեժիսոր՝ Սեւումեան
աա. 1215. 1-1

Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Վերադառնալով՝ արտասահմանից վերանորոգեց ներքին հիւանդութիւնների ընդունելութիւնը. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕՏՕՐԱԿՍՈՎ։ Թոքերի և սրտի քննութիւնը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская 23. тел. 7—92.
(ա.օ.) աա. 977 100—44

ԲԺԻՇԿ
Մ. Կ. ՄԱՐՈՒԲԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ
Սիֆիլիս, վեներական եւ կաշուի հիւանդութիւնների։
Սրսկումն «606»-ի և «914»-ի։
Ընդունելութիւն (առ. ժ. 1—2
(եր. ժ. 5—8
Լեվաւէտրինսկայա փ. № 39. տ. Ջաղէթեանի։
(չ.ու.կ.) աա. 901. 100—22

ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Առաջիկայ տօների առիթով չքաւոր ընտանիքներ, որոնք ամաչում են մուրալ և զուրկ են ապրուստի միջոցներից, դիմում են խմբագրութեանս՝ խնդրելով օգնութիւն։ Ինչպէս ամեն տարի, այսօր եւս խմբագրութիւնը կոչ է անում կարեկից անձանց՝ չը մոռանալ այս տօներին թշուառներին և չքաւորներին։

ՀՈՂԱՅԻՆ ԲԱՆԿ

Հողային հարցը ամենահրատապ հարցերից մէկն է այժմ ոչ միայն Թիւրքիայի հայ գիւղացիութեան, այլ և մեր երկրի հայ շինական ազգաբնակութեան համար։

Ռուսական տիրապետութեան ներքոյ ապրելով խաղաղութեան և անդորրութեան մէջ, հայ գիւղական ազգաբնակութիւնը աճել, մեծացել է քանակով, իսկ քանակը այն հողի, որի վրա նա ապրում է, որ նա հերկում, սերմանում է, մնացել է նոյնը, չէ աճել, չէ մեծացել։ Եւ այսօր հայ շինական ազգաբնակութիւնը հողի սուր կարիքի առաջ է գտնվում։ Եւ, ի հարկէ, ոչ այն պատճառով, որ մեր երկրում հող չը կայ. ոչ, այլ այն պատճառով, որ հողի մեծամասնութիւնը գտնվում է կալուածատէրերի կամ մուլքադարների, հայ և թուրք բէգերի, աղաների ձեռքում։

Բայց կա՞յ հնարաւորութիւն ձեռք բերել այդ հողերը գիւղացիների համար։

Այո, կայ։ Կայ, որովհետև մուլքադարները, բէգերը վաճառում են իրանց հողերը։ Բայց գնողները գիւղացիները չեն, այլ Ռուսաստանից, Եւրոպայից եկած զանազան կապիտալիստներ, ընկերութիւններ, որոնք պարապում են հողերի վաճառման աշխատանքով, այսինքն հողերը գնում են առևտրական, շահեցման նպատակով՝ կամ աւելի թանգ ծախելու և կամ բամբակագործական ու այլ շահաւէտ ձեռնարկութիւններ կատարելու համար։

Հայ գիւղացիները չեն կարող, հնարաւորութիւն չունեն իրանց սեփական միջոցներով ձեռք բերել հողեր։ Պէտք է նրանց օգնող լինի։

Եւ այդ օգնողը պէտք է լինի հողային կամ հողային-շինական բանկը։

Մենք հայերս չունենք այդպիսի մի հողային-շինական բանկ, որի միջոցով և աջակցութեամբ հայ գիւղացիները կարողանային ձեռք բերել հողեր կալուածատէրերից և բէգերից։

Այդպիսի մի բանկ կարող էին հիմնել հայ հարուստները, հայ կապիտալիստները։ Եւ նրանք ոչ միայն իրանց դրամագլուխները լաւ դասաւորած կը լինէին, ոչ միայն լաւ օգուտ, տոկոս կը ստանային, այլ և օգնած կը լինէին հայ գիւղացիներին ձեռք բերել հողեր։

Հողային բանկը ինքը կը գնէր մեծ քանակութեամբ ծախվող հողերը և ապա մաս-մաս կը վաճառէր գիւղացիներին, ինչպէս անում են պետական հողային բանկերը։

Մեր ժողովուրդը ի բնէ երկրագործ և հողագործութեան անձնուէր տարր է եղել։ Նա պէտք է կապված մնայ հողին և մնում է։ Միայն հողի պակասութիւնն է, որ ստիպում է նրան պանդխտել այլ երկիրներ և պարապել այլ գործերով։ Պէտք է նրան հնարաւորութիւն տալ հող ձեռք բերել և դրանով ազատել նրան պանդխտութեան աղէտալի հետևանքներից։

Ժամանակ է, որ հայ կապիտալիստները մտածեն մի քիչ էլ ժողովրդի, գիւղացիութեան մասին։ Նրանք բարեգործութիւն չեն անելու, իրանց դրամները չեն նուիրելու. Նրանք իրանց դրամագլուխը շահեցնելու են, բայց միևնոյն ժամանակ օգնելու են գիւղացիներին։

Հիմնեցէք, հայ կապիտալիստներ, հողային-շինական բանկ։

Հ. Առաքելեան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Մօսկվա, 19 դեկտ.

Ամսիս 17-ին տեղիս հայ ուսանողութեան նախաձեռնութեամբ կայացաւ դասախօսութիւն հայկական հարցի մասին. դասախօս Ալ. Մեասնիկեանը բաւական աջող վերլուծեց հայկական հարցը պատմական, դիպլոմատիական և գործնական տեսակէտներից։

Թիւրքիայի պատմութեան վրա ընդհանուր ակնարկ ձգելով՝ Թիւրքերի Անատոլիայում երևալու օրերից սկսած, որոշելով Ռուսաստանի դերը «հիւանդ մարդու» կեանքի վերաբերմամբ, դասախօսը անցնում է նկարագրութեանը, Թիւրքահայի դրութեան, որը, նրա կարծիքով, և յարուցեց հայկական հարցը։

Սուլթանների շնորհած ազգային սահմանադրութիւնը ստեղծված էր միայն Կ. Պօլսի ամիրաների և էֆէնդիների համար, առանց առնչութիւն ունենալու հայ գաւառական մասսայի հետ, որովհետև ի՞նչ սահմանադրութեան մասին կարելի է խօսք լինել, երբ ամենաէական մարդկային իրաւունքը՝ կեանքի և գոյքի ապահովութիւնը գոյութիւն չունի։

Պարզելով Միդհատ-փաշայի սահմանադրութեան հրատարակվելու պատճառը, նրա վախճանը և Թիւրք մեծ հայրենասէրի վիճակը, դասախօսը նկարագրեց հայերի վերաբերմունքը դէպի 1876-ի սերբ-թիւրքական պատերազմը. Նրա կարծիքով հայերը այն ժամանակ չը կարողացան կատարել իրանց պարտականութիւնները. պատմական ինչ-որ փաստի վրա հիմնվելով, նա յայտնում է, թէ Ներսէս Վարժապետեան պատրիարքը շատ գոհ էր Աբդուլ-Համիդից և, երբ թէ, նա ասել է՝ «Երանի թէ միշտ ձեզ պէս հրեշտականման թագաւորներ ունենայինք» (!)։

1876-ին Վանում տեղի է ունենում մեծ հրդեհ, որին հետևում է հայկական ջարդ. անա այդ ժամանակվանից հայկական հարցը պաշտօնապէս հրապարակ է գալիս։ Սկսվում է ռուս-թիւրքական պատերազմը. Նրա ընթացքում Գրիգոր Արծրունին ներկայացնում է ուղերձ բազմաթիւ ստորագրութիւններով Ալէքսանդր II-ին. վերջինս հրամայում է, յարգելով հայերի խնդիրը, Իգնատիևին մտցնել դաշնագրի մէջ հայերի շահերի պաշտպանութեան համար յօդուած. այդպէս ստեղծվում է Սան-Ստեֆանոյի 16-րդ յօդուածը. Չը նայած լորդ Սոլսբիւրիի ընդդիմադրութեան, որի կարծիքով հայերը անպատրաստ են ռեֆորմների և չեն ներկայացնում ուշադրութեան արժանի տարր, այդ 16-րդ յօդուածը հայերի բազմաթիւ աղերսանքներից յետոյ դառնում է Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը, որով Թիւրք կառավարութիւնը պարտաւորվում է հայերի կեանքը և գոյքը ապահովել չերքեզներից և քիւրդերից և իր ձեռնարկած միջոցների համար միշտ հաղորդել մեծ պետութիւններին։

Ապա նա նկարագրում է հայերի տնտեսական դրութիւնը Համիդի օրերում, հարկերի ծանրութիւնը, քիւրդերի կեղեքումները, հայերի իրաւազուրկ լինելը, ադմինիստրացիայի և դատաստանի վերաբերմունքը դէպի հայերը։

Ցոյց տալով հասարակութեան զանազան խաւերի վերաբերմունքը դէպի Թիւրքահայ դատը, նա անցնում է հայ կուսակցութիւնների գործունէութեան, որի մէջ նա գտնում է երկու կողմ՝ 1) գործունէութիւն երկրում և 2) պրօպագանդա Եւրոպայում. վերջինիս իրագործման համար հայերը դիմում էին կարգով մեծ պետութիւններին. մինչև վերջին ժամանակները նրանց ուշադրութիւնը յառած էր Լօնդօնի վրա. Գլադստօնից էին սպասում նրանք հայութեան փրկութիւնը. յետոյ նրանք աչքերը դարձնում են 20-րդ դարի սկզբից Ֆրանսիայի վրա, սակայն 1904 թ. Անդրանիկի կռիւներից յետոյ նրանց յոյսը կտրվում է, դիմում են անում Միացեալ-Պետութիւնների նախագահ Րուզվելտին։

Հայկական հարցի լուծումը դասախօսը իրաւացի կերպով կապեց եւրոպական պետութիւնների շահերի դասաւորութեան հետ. Թիւրքիայի տնտեսական դրութիւնը ողբալի է. չը կայ շրջանառութիւն, շատ տեղեր դեռ թագաւորում է նախնական տնտեսութիւնը. չը կայ փող, արդիւնաբերութիւն, մինչդեռ եւրոպական կապիտալն իր համար շուկայ էր փնտռում Ասիայում և Աֆրիկայում, այդ պատճառով քայքայվող դիակը ամենալաւ ապարէզ էր նրա համար. մենք վկայ ենք Թիւրքիայի ազդեցութիւնների շրջանների բաժանելուն և նրա եւրոպական կօլօնիա դառնալուն։

Ապա նա վերլուծում է մեծ պետութիւնների վերաբերմունքը դէպի հայերը. Ռուսաստանի քաղաքականութեան անհամարձակութիւնը և փոփոխականութիւնը նա բացատրում Անգլիայի բացասական վերաբերմունքով դէպի հայկական ռեֆորմները, որոնք ուժեղացնելով նրա պրեստիժը Փոքր Ասիայում՝ ճանապարհ բաց կանէին նրա համար դէպի Պարսից ծոցը և Միջերկրական ծովը։ Գերմանիան դեռ երկաթեայ կանցլերից սկսած միշտ հակառակ է եղել հայկական բարենորոգումներին, որովհետև նա համարում էր Թիւրքիան միայն իր օրինաւոր ժառանգութիւնը։ Իսկ Ֆրանսիայի համար հայկական հարցը նշանակութիւն չունի. Նա որպէս համաշխարհային բանկիր՝ պատրաստ է բոլորին էլ փող տալ, միայն լաւ տոկոսներ ստանալու պայմանով։

Ցոյց տալով հայերի յուսախաբութիւնը երիտասարդ թիւրքերի քաղաքականութեան պարզվելուց յետոյ, հայ կուսակցութիւնների նրանց հետ դաշն կապելու սխալ լինելը, քանի որ երիտասարդ թիւրքերի ծրագրի մէջ կային այսպիսի կէտեր՝ կենտրոնացում, կրօնի, այլ ոչ լեզուի ազատութիւն և այլն, դասախօսը ընդգծում է, որ երիտասարդ թիւրքերի օրով հայերի դրութիւնը բոլորովին չը լաւացաւ. Նա նոյնն է, ինչ որ Համիդի օրերում, ապացոյց՝ Ադանայի ջարդերը, Թիւրքահայերի տնտեսական դրութիւնը, որոնցից խլված են 28,000 արտ, 2009 խոշոր կալուածք, ուրիշ կալուածքներ 40,000-ի չափ, հայերի թիւը պակասում է 1882 թ-ից. նա պակասել է 600,000-ով. ամենալաւատես աղբիւրը 6 վիլայէթներում գտնում 1,200,000 հայ, մինչդեռ Ա-Դօն 800,000, այնպէս որ հայերը կազմում են զանազան վիլայէթներում 30—50%։

Հայկական խնդրի լուծման համար կայ երեք միջոց.

ա) Անեքսիան, որը կարող է լինել Ռուսաստանի կողմից, որպէս անմիջական հարևանի. դասախօսի կարծիքով՝ դա իրագործելի և օգտակար չէ. ոչ մի պետութիւն թոյլ չի տայ Ռուսաստանին գրաւել ամբողջ հայկական բարձրաւանդակը և մօտենալ Միջերկրական ծովին. աննեքսիան կարող է լինել միայն երեք հարևան վիլայէթների վերաբերմամբ, հետևապէս 500,000 հայերի վիճակը կը լաւանայ, մինչդեռ մնացեալ 1½ միլիոնը կը շարունակի տառապել թիւրքական լծի տակ. այս տեսակէտից աննեքսիան օգտակար չէ։

բ) Կօնտրօլի տակ գտնվող ռեֆորմներ. Անգլիայի և Ռուսաստանի վերաբերմունքը դրական, Ֆրանսիան ձեռնպահ է մնում, իսկ Գերմանիան առերես համաձայնութիւն տալով շարունակում է մնալ գլխաւոր խոչընդոտ և Բօսֆօրի ափերում իր քաղաքականութիւնն է առաջ տանում։ Սակայն Գերմանիայի ազդեցութիւնը աւելի քան երբևիցէ այժմ ուժեղացել է Թիւրքիայում և երբէք նա չի համաձայնի ռուսական պրեստիժի ուժեղանալուն ռեֆորմների մտցնելուց յետոյ, կօնտրօլի ժամանակ. այդ պատճառով, ռուս-գերմանական համերաշխ գործակցութեան մասին խօսք էլ չէ կարող լինել, որովհետև այդ երկու պետութիւններն այժմ վերին աստիճանի թշնամական յարաբերութիւնների մէջ են։ Կօնտրօլի ժամանակ հակադիր շահերը կը շարունակեն մրցել միմեանց հետ, և՝ ինչպէս այդ Մակեդոնիայում եղաւ՝ 7000 ժանդարմները կը բռնեն համիդեան գնդերի տեղը։

գ) Երրորդ միջոցն է՝ ինքնավարութիւնը. սա ամենացանկալին և իրագործելին է. դասախօսի կարծիքով՝ նա կօնտրօլի նման փրկարար չի լինի, նա Լիբանանի և Սամոսի ինքնավարութիւնների նման աջող և կենսունակ կը լինի. բայց այդպիսի լուծման համար չը կան բարեհաճոյ պայմաններ. հայկական հարցը շարունակում է մնալ որպէս մի գորդեան հանգոյց. Եւրոպական Թիւրքիայի քրիստոնեաների ազատագրութիւնը բացատրվում է եւրոպական պետութիւնների շահերով և մի շարք ուրիշ հանգամանքներով, որոնք Հայաստանում չը կան։ Այդ բացասական պայմաններն են՝

1) Աշխարհագրական դրութիւնը, 2) ոչ կուլտուրական ցեղերի (քիւրդերի, արաբների և այլն) հարևանութիւնը, 3) ազգաբնակութեան ցրվածութիւնը, 4) հայ ազգաբնակութեան կէսից աւելի պակաս լինելը, 5) այն հանգամանքը, որ ոչ մի պետութիւն հայութեան չէ համարում իրան ցեղակից կամ կրօնակից, 6) հայկական շարժումը չունի իր իմմանենտ ույժերը. Նա մինչև վերջին ժամանակները տարվում էր կովկասահայերի և առհասարակ դրսի հայերի կողմից, 7) մեծատուների և գիւղացիութեան միջև եղած անջրպետը։

Հայկական հարցի լուծումը կախված է երեք ֆակտորներից. 1) մեծ պետութիւններից, 2) թիւրք կառավարութիւնից և 3) հայ ժողովրդից. առաջինի մասին արդէն աւելորդ է խօսել. երկրորդ ֆակտորը՝ թիւրք կառավարութիւնը չունի վճռող նշանակութիւն. Նա չէ ներկայացնում իրանից անկախ պետութիւն. նա կօլօնիա է և նրա ներքին և արտաքին քաղաքականութեան ղեկը գտնվում է օտար պետութիւնների ձեռքում. հետևապէս նրանից չէ կախված հայկական հարցի վճիռը։ Երրորդ ֆակտորը՝ դա ինքը հայ ժողովուրդն է. պէտք է պատրաստել ժողովրդին, ասում է դասախօսը. պէտք է նրան ույժ տալ, պատրաստել ամեն մի անակնկալի համար, և լուծման սպասել հանգամանքների աջող դասաւորումից. լացի քաղաքականութիւնից պէտք է անցնել գործի. սակայն Թիւրքահայերը պէտք է յիշեն միշտ, որ նրանց ազատագրութեան գործը՝ նախ իրանց գործը պէտք է լինի։

Դասախօս գտնում է բոլորովին բնական հայ կուսակցութիւններից մէկի բանակցութիւնների մէջ մտնելը երիտասարդ-թիւրքերի հետ. Նրանք գործիչներ են, հետևապէս կարող են անել այն, ինչ որ, նրանց կարծիքով, օգտաւէտ կը լինի հայկական դատի լուծման. սակայն դասախօսը բոլորովին չը բացատրեց, թէ արդեօք հայկական հարցի միջազգային բնոյթից զրկելը որքան օգտաւէտ կը լինի և թէ հայկական հարցը Թիւրքիայի ներքին գործը դարձնելով մենք չե՞նք պատճառ դառնայ նրա յետաձգվելուն և ներկայ յարմար րոպէից զրկվելուն։

Կովկասի ռամկավարական տարրը նոյնպէս օր առաջ ցանկանում է իրականացած տեսնել Թիւրքահայ դատի լուծումը, որովհետև այն ժամանակ միայն նա կարող է զբաղվել իր գործերով։

Մենք թէ բարոյապէս և թէ նիւթապէս պարտաւոր ենք օգնել այդ հարցի լուծմանը, որովհետև դա ոչ միայն ազգային նշանակութիւն ունի, այլ և համամարդկային։

Հայ ինտելիգենցիան, որ, յարաբերական քանակով, Ռուսաստանում առաջինն է, չէ կանգնած իր կոչման բարձրութեան վրա. նա հաւատում է միայն իր քսակին. նա այլասերված տարր է. նա չէ կարող ինտելիգենցիա համարվել, քանի որ չէ զբաղվում նախ իրանով։ Ապա դասախօսը կոչ արեց ուսանողութեան լինել միշտ իդէալիստ, չը լինել անասնական հակումներով տարված, ղեկավարվել միշտ համամարդկային վեհ գաղափարներով։

Դասախօսից յետոյ մի շարք նկատողութիւններ է անում Զիվիլեգեանը. նա էլ համաձայն է, որ ինքնավարութիւնը ամենալաւ ֆորմն է, սակայն պէտք է հայերը ընդունեն այն, ինչ որ տալիս են. ինքնավարութիւն ոչ ոք չէ մտածում տալ. Գերմանիան և Ռուսաստանը յանգեցին մի մինիմումի, որը համապատասխանում է միայն ամենահամեստ ցանկութիւններին. այդ մինիմումը պէտք է ընդունենք, որովհետև ի զուր է դասախօսը գտնում, թէ միևնոյն դրութիւնը կը ստեղծվի, որը Մակեդոնիայում էր. այդպէս չի լինի. Թիւրքական գեներալ-նահանգապետի մօտ գտնվող երկու խորհրդականները կունենան վճռող ձայն ամեն մի գործի մէջ. հետևապէս նահանգապետը de facto ոչ մի ազդեցութիւն չի ունենայ երկրի կառավարութեան վրա. այդ խորհրդականների ետևում կանգնած կը լինի եւրոպական կոնցերտը։ Հայերին հարկաւոր է մի քիչ շունչ քաշել ֆիզիքապէս և նիւթապէս՝ քիչ ոտքի կանգնելու համար. այդ հանգիստը կը տայ րեֆորմների մինիմումը։ Հայկական հարցը, օպոնենտի կարծիքով, դուրս եկաւ իր նախկին վիճակից. նա այժմ հերթական է և հրատապ. հայ ժողովուրդը կունենայ լաւ ապագայ, որովհետև նա պահպանեց իր ինքնուրոյն դէմքը, իր կուլտուրան. նա է միակ ժողովուրդը Առաջաւոր Ասիայում, որի վրա այժմ կարող է յենվել եւրոպական կուլտուրան և կապիտալը, այժմվայ բաղդի անօրէնը. հայերի դաշնակիցն է. Գերմանիան, որ՝ կորցնելով իր յոյսը Թիւրքիայից ստեղծել պետութեան բուֆեր՝ վերջին պատերազմից յետոյ իր ուշադրութիւնը դարձրեց հայերի վրա. նա այժմ փնտրում է յենակէտ հայութեան մէջ։

Ապա խօսեցին երդ.-հաւատ. Մամիկոնեանը, Ս. Միքայէլեանը և մի քանի ուրիշները։

Դասախօսութիւնից հասարակութիւնը գոհ մնաց։

Ե. Ց.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

23 դեկտեմբերի

Պետերբուրգ.—Կովկասի փոխարքայի զինուորական մասի օգնական գեներալ Շատիլովին հրամայված է լինել Պետական Խորհրդի անդամ։

—

Պետերբուրգ.—Բացվեց ժողովրդական կրթութեան համառուսական համագումարը։ Գրվել են 6200 մարդ։ Բոլոր եկածները չը կարողացան տեղաւորվել ժողովրդական տան դահլիճում։ Բացմանը ներկայ էին առևտրի, ժողովրդական լուսաւորութեան և ներքին գործերի մինիստրների օգնականները, Դումայի անդամներ, քաղաքագլուխը։ Նախագահ ընտրվեց Պետերբուրգի Գրասիրաց Ընկ. նախագահ Մամոնտովը, օգնականներ՝ Դուշէչկին, Վախտերօվ, Դումայի անդամ Կովալևսկի և Կլիւժեվ։ Ողջունեցին համագումարը աւելի քան 20 պատգամաւորութիւններ. ստացվել են մի քանի հազար ողջոյնի հեռագիրներ, ի թիւս որոց մինիստրների խորհրդի նախագահից, առևտրի մինիստրից, Դումայի շատ անդամներից։

Համագումարը բաժանվեց 5 սեկցիաների—դպրոցների կազմակերպութեան, ընդհանուր հարցերի, ուսուցման, կրթութեան և ժողովրդական ուսուցիչներ պատրաստելու, բժշկական, մանկավարժական և ուսուցման մեթոդների։

—

Աթէնք.—Վէնիզելօսը վաղը մեկնում է Հռոմ, յետոյ՝ Պարիզ։

Կառավարութիւնը, տեղեկանալով, որ շատ բուլղար կոմիտաջիներ շարունակ մտնում են յոյն-բուլղարական սահմանին, վճռեց անյապաղ գործադրել Մակեդոնիայում աւազակախմբերին վերաբերեալ նոր օրէնքը։

—

Սօֆիա.—Նշանակվեցին երեք մասնաժողովներ բուլղար փախստականներին նոր նուաճված երկիրներում բնակեցնելու համար։ Նրանց կը տրվի հողեր ու միջոցներ այդ հողերը մշակելու համար։

—

Բուխարէստ.—Պատասխանելով սենատում ուղղված հարցին, Մայորեսկուն ասաց, որ կօալիցիօն կաբինետի խնդիրը արտաքին քաղաքականութեան շրջանում աւարտված է. Ներքին քաղաքականութեան վերաբերմամբ կաբինէտը կազմող կուսակցութիւնների ծրագիրը այնքան տարբեր է, որ կաբինէտի հրաժարականը իսկապէս տեղին է։

—

Զագրէբ.—Սէյմը ընդունեց Ունգարիայի հետ մի տարով կնքված ֆինանսական համաձայնութիւնը և պատգամաւորներ ընտրեց ունգարական պարլամենտի համար։

ՑԱԲԵՐՆԻ ԴԷՊՔԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Ստրասբուրգ, 23 դեկտ.

Զինուորական դատարանում սկսվեց գնդապետ Րէյտէրի և պօդպօրուչիկ Շադի գործի քննութիւնը Ցաբէրնի յայտնի դէպքերի առիթով։ Րէյտէրը մեղադրվում է գործադիր իշխանութիւնը Ցաբէրնում ապօրինաբար երկար ժամանակով իր ձեռքում պահելու, մարդկանց ազատութիւնից զրկելու և ուրիշներին էլ դրանում դրդելու մէջ։ Շադը մեղադրվում է ուրիշներին դրդելու, մարդկանց ազատութիւնից զրկելու և բռնութիւններ գործ դնելու մէջ։ Վկաների թիւն է 115։

Րէյտէրը յայտնեց, որ այն ամենը, ինչ որ արել են նրա ստորադրեալները, արել են իր կարգադրութեամբ, բնորոշեց զինուորականների և ազգաբնակութեան փոխ-յարաբերութիւնները։ Րէյտէրը պատուիրագրեց զինուորականներին պաշտպանվել ազգաբնակութեան յարձակումների դէմ, հարկ եղած դէպքում զէնքով։ Ապա Րէյտէրը ասաց, որ օֆիցէրները գործում էին խելացիօրէն։ Երբ դեկտ. 5-ին երեկոյեան, պալատական հրապարակի վրա խուժանի անկարգութիւնները չը մեղմացան, նա զգաց, որ ինքն է հանդիսանում զօրքի պատիւը, այլ և կառավարութեան երերված հեղինակութիւնը պաշտպանողը։ Քաղաքացիական իշխանութիւնները ամբողջ օրը ոչինչ չը ձեռնարկեցին։ Րէյտէրը աւելացնում է, որ գործեց համաձայն օրէնքի և իրաւունքի և այդպէս էլ կը վարվէր այժմ, որովհետև պատասխանատու է կայսրի առաջ։

Պօդպօրուչիկ Շադն ասում է. «Մենք անպաշտպան էինք, ազգաբնակութիւնը ծաղրում էր մեզ»։

Շրջանապետ Մալը ասում է, որ Րէյտէրը նրան անտես արաւ։ Հոկտ. 26-ին, երբ Րէյտէրը դիմեց ոստիկանութեան աջակցութեան, ուղարկվեցին 6 ոստիկան, որոնք և ցրեցին ամբոխը։ Այնուհետև Մալը յայտնում է, որ օֆիցէրները փողոցում գործում էին ցոյցով։

Պաշտօնեայ Գրոսմանը ցոյց է տալիս, որ Րէյտէրը յայտնեց իրան՝ թէ բաղդաւորութիւն կը համարի, եթէ արիւն թափվի։

(Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՍԱԿԻ ՓՈԽԱՐԷՆ

Ալ. Քալանթարի անուան հիմնվելիք ֆոնդին ստացանք Վլադիվօստօկից՝ Խ. Գրիգորեանից—10 րուբլի։

ԴՐ. ԲԱԼԱՍԱՆԵԱՆԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Կիսլօվօդսկից՝ մի անյայտից—10 ր.։ Նախորդ ստացվածների հետ միասին (տես «Մշակ» № 277) ունենք ստացած ընդամենը 25 ր.։

ՄԻ ՀԱՏ ՓԱՍՏԸ ՀԱԶԱՐ ԽՕՍՔ ԱՐԺԷ

«Հորիզոնի» № 276-ում տպված առաջնորդողը ես էլ կարդացի։

Կարդացի նախ՝ իբրև ընթերցող, երկրորդ՝ հայկական հարցով հետաքրքրվող և յեղափոխական կազմակերպութիւնների գործողութիւններին հետևող և երրորդ՝ իբրև մէկը հայ մամուլի համեստագոյն աշխատակիցներից։

«Մշակը», մայրաքաղաքի երկու հեղինակաւոր թերթերի տուած տեղեկութիւնների վրա հիմնվելով, որոշ վերապահութեամբ, դատապարտել էր Դաշնակցութեան հակազգային ընթացքը, անուանելով դաւաճանութիւն, յանցագործութիւն և ոճիր հայկական դատի դէմ։

Ու կոչ էր արել հասարակութեան բողոքել։

Ահա այդ բանի դէմ է, որ գրում է «Հորիզոնը»։ Նա նախ՝ պաշտպանում է Դաշնակցութեան, որն՝ իբր թէ Թիւրքահայ ազատամարտի ղեկավարը եւ հայոց հարցի գլխաւոր պաշտպանն է հանդիսացել, իբր թէ հայ ժողովրդի վրա այդ կազմակերպութիւնը այնքան երախտիք ունի։

Ապա «Հորիզոնը» աշխատում է հերքել իր պաշտպանեալի վրա բարձված մեղադրանքները՝ հայհոյելով «Մշակին», մոռանալով որ այդ լուրերի հեղինակը «Մշակը» չէ։

«Հորիզոնի» հերքման աղբիւրը կազմում են Պոլսից Թիֆլիս եկած ինչ-որ մի քանի մարդիկ, որոնց նա անուանում է վստահելի ու իրազեկ։

Այդ հերքումը ինձ վրա շատ անաջող կերպով թխված հէքիաթի տպաւորութիւն թողեց։ Եթէ այդ հէքիաթը թխված չէ «Հորիզոնի» խմբագրատան մէջ, այն ժամանակ՝ շատ պարզ երևում է, որ Պոլսից նոր եկած մարդիկ կամ Դաշնակցութեան կողմից ուղարկվածներ են որոշ միսսիայով, կամ այն միամիտ հաւատացեալներից, որոնք Դաշնակցութիւնից բղխած ամեն մի խօսք հալած իւղի տեղ են ընդունում։

Այլապէս այդ նոր եկողները չէին քաշվի մտնել նաև «Մշակի» խմբագրատունը հերքելու համար մայրաքաղաքի թերթերում լոյս տեսած լուրը և ցոյց տալու համար, որ՝ իրօք՝ իրանք վստահելի ու իրազեկ մարդիկ են։

Նա՝ որ ծածկված է մնում, որ ինքն իրան պահում է անյայտութեան մէջ, նա չի կարող ոչ վստահելի լինել, ոչ անաչառ, ոչ անկաշառ։

Այսքանը իբրև ընթերցող։

Այժմ՝ իբրև հայկական հարցով հետաքրքրվող և հայ յեղափոխական կազմակերպութիւնների գործողութիւններին հետևող։

Առաջին անգամը չէ, որ հայ մամուլի որոշ օրգաններից և Դաշնակցութեան ղեկավարներից լսում ենք, որ այդ կազմակերպութիւնն է, որ պաշտպանել է հայկական հարցը, նոյնիսկ՝ ըստ ոմանց՝ նա է ստեղծել այդ հարցը, որ հայը ոտքով գլխով երախտապարտ է այդ կազմակերպութեան հանդէպ, մի խօսքով՝ միմիայն Դաշնակցութեան շնորհիւ է, որ հայի գլխին արև է ծագում։

Ականջը խօսի սուլթան Համիդի. մի ժամանակ նրա մասին էլ էին նման բառեր շռայլում, բայց շռայլում էին ստրկահոգի մարդիկ և այնպիսիք, որոնք Համիդի արիւնոտ ոսկիներով էին ապրում։

Ես հարց չեմ բարձրացնում, թէ Դաշնակցութեան հասցէին նման կոմպլիմէնտներ անողները ինչպիսի մարդիկ են և ինչից դրդված։

Բայց ես իրաւունք եմ համարում հարցնելու։

Առաջին՝ ինչ օրինակներով, փաստերով կարող էք հաւատացնել մեզ՝ թերահաւատներիս, թէ Դաշնակցութիւնը Թիւրքահայ ազատամարտի ղեկավարն է եղել։

Երկրորդ՝ ինչ է արել այդ կազմակերպութիւնը յօգուտ հայի, որ սա ինքն իրան երախտապարտ համարի նրա առաջ։

Երրորդ՝ դուք կարող էք հերքել, ի հարկէ փաստերով և ոչ դատարկ խօսքերով, որ այդ կազմակերպութիւնը Ադանայի կոտորածի ժամանակ ազգին չը դաւաճանեց, տասնեակ հազար անմեղներին զոհ չը բերեց իր կուսակցական մասնաւոր շահերին։

Որովհետև ես այդ կուսակցութեան մասին շատ աննպաստ փաստեր ունեմ, ուստի կասեմ, որ մինչև որ իմ տուած հարցերին փաստերով չը պատասխանէք, ես կը մնամ հետևեալ կարծիքի մէջ, այն է՝ որ եթէ սեպարատ բանակցութեան լուրը Թիւրք կառավարութեան հետ հերքվի նոյնիսկ, այնուամենայնիւ նրա գործունէութեան շատ տխուր փաստերը բաւական են, որ մենք ասենք «ստոպ» և պահանջենք, որ նա երբէք իրաւունք չունենայ յանուն ազգութեան ոչ մի քայլ անելու, ինքն իրան ազգի ներկայացուցիչը համարելու։

Որպէս մասնաւոր անհատների չենք կարող արգելել, որ իրանց առանձին գործերը, իրանց շահերը իրանց ուզածի նման կարգադրեն, նոյնը չենք կարող պահանջել նաև Դաշնակցութիւնից։

Բայց ինչպէս «Հորիզոնը» չի թոյլ տայ, որ մի անհատ կամ կազմակերպութիւն վեր ենի և իր անունից կարգադրութիւններ անի առանց այդ առիթով հաւատարմաթուղթ ունենալու, նոյնպէս հայ ազգը նոյնը չը պիտի թոյլ տայ Դաշնակցութեան։

Սա իմ կարծիքն է, նոյնիսկ համոզումս, մինչև որ փաստերով չապացուցանեն, թէ ես սխալ եմ։

Սրա հակառակ՝ եթէ ինձնից էլ հակառակն ապացուցանող փաստեր պահանջվի, ես պատրաստ եմ։

Ս. Յ. Մուրադեան

Սամարղանդ

ՎՐԱՑ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԱՒԱՆԴՈՒՄԸ ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Ուրախութեամբ կարդացի «Մշակում», որ Ներսիսեան հայոց դպրոցի հոգաբարձութիւնը որոշել է վրաց լեզուն դարձնել պարտադիր առարկայ դպրոցում։ Դա ժամանակակից հարց է, որ նպաստաւոր լուծում է ստացել։ Եւ յիրաւի, ինչ կը նշանակէ ապրել Վրաստանում և բնիկ ժողովրդի լեզուն չիմանալ, չուսումնասիրել նրա պատմութիւնը և գրականութիւնը։

Բայց Ներսիսեան դպրոցը բաւական չէ։ Անհրաժեշտ է, որ վրաց լեզուի դասաւանդութիւնը մտցվի նաև Վրաստանի ծխական դպրոցներում, որտեղ սովորում են վիրախօս հայ երեխաները։ Այս հարցը մի քանի անգամ արծարծել ենք «Մշակում»։ 1906 թ. Սղնախում ժողովված Կախեթիայի պատուիրակները վճռեցին մտցնել վրաց լեզուն հայոց դպրոցներում և այս մասին միջնորդութիւն յարուցել Էջմիածնում։

Վիրախօս երեխաները խօսում են վրացերէն, բայց նրանք գրել-կարդալ չը գիտեն, յետոյ կողմնակի կերպով սովորում են։ Ուրեմն, ինչ մեղք կայ, որ այն բանը, ինչ հարկաւոր է նրանց կեանքում, ձեռք բերեն դպրոցում։ Զէ որ դպրոցում ուսածը աւելի հիմնաւոր և բեղմնաւոր կը լինի, քան մասնաւոր կերպով սովորածը։ Դպրոցում նրանք կանոնաւոր կը սովորեն գրել-կարդալ, մինչդեռ դուրսը ծուռ, վատ կը գրեն, վատ կը կարդան։

Ես 20 տարի ուսուցիչ եմ եղել վիրախօս տեղերի դպրոցներում։ Շատ անգամ ես առիթ եմ ունեցել տրտունջ լսելու երեխաների ծնողներից, թէ ինչու հայոց դպրոցներում վրացերէն չեն սովորեցնում, քանի որ այդ անհրաժեշտ է իրանց։

Անհրաժեշտ է, որ հայոց ծխական դպրոցներում, որտեղ սովորում են վիրախօս հայ մանուկներ, III բաժանմունքից սկսեն վրացերէն սովորեցնել, շաբաթական յատկացնելով 1—2 դաս։ Դրանով կը գրաւենք աւելի մեծ քանակութեամբ մանուկներ և գոհացում կը տանք ծնողներին։

Յ. Ք. Գրիգորեան

Ծարսկիէ-Կոլոդցի

ԳԱՂԱՓԱՐԱՊԱՇՏԸ

I

Վաթսունական թւականների ազատամտութեան ռուս առաջնորդներից մէկը, Հերցէնի իսկական աշակերտը՝ Չերնիշևսկին մի վէպ ունի. վերնագիրն է «Что дѣлать?». Չերնիշևսկիի երկերից միայն այս վէպն է ստացել լայն ժողովրդականութիւն. գրված է Հերցէնի «Кто виноватъ» վէպի ազդեցութեան տակ և նպատակ է ունեցել ցոյց տալ ռուս հասարակութեան, թէ ինչ պէտք է անել 60-ական թւականների բարենորոգումներից յետոյ։ Հեղինակը իր հերոսների օրինակով մատնանշում է ցանկալի գործելակերպը.—պէտք է առաջ գան գաղափարական մարդիկ, կազմակերպեն կօօպերատիվ հիմունքներով զանազան ձեռնարկութիւններ, պէտք է վերացնել սիրային հողի վրա պատահող անախորժութիւնները՝ մէկին սիրելու կամ միւսին ենթարկվելու ձգտումը պէտք է համապատասխանէ փոխադարձ ազատ ցանկութեան և չը պէտք է [illegible] կամէ հասարօգուտ սկզբունքներին, և այլն։ Չերնիշևսկին աւելի առաջ է գնում և իր նոյն վէպում հանդէս է բերում Րախմետովին, մի գաղափարապաշտի, որ իր ընկերասիրութեամբ և անկոտրուն գաղափարականութեամբ զրկում է իրան մի շարք անձնական բարեկեցութիւնից, վերացնում է ամեն մի վայելք, փարթամութիւն և քաղցրեղէններ, բաւականանում է միայն այնքանով, որ կարողանայ ապրել, և ամբողջապէս նուիրվում է իր ընկերներին ու ընկերական գործին։

Պատանի ժամանակս, Ներսիսեան դպրոցում, ես յափշտակված էի այդ վէպով. մասնաւորապէս Րախմետովը էր ինձ շատ ոգևորում և մտածել տալիս։ Այդ ժամանակ ես կարծում էի, թէ Չերնիշևսկին իր Րախմետովի տեսքը վերցրել է երևակայութիւնից, որ կեանքի մէջ ես կան այդպիսի գաղափարապաշտներ, ինչպէս կան և եսապաշտներ (էգօիստներ)։ Րախմետովի բնութագրի մէջ ես տեսնում էի այնքան սիրելի և համակրելի գծեր, որ նրան բազմեցրել էի պատմութեան դիւցազն Շիլլերի Կարլ Մօօրից և Վիլհելմ Տէլլից աւելի բարձր, որպէս ընդօրինակութեան արժանի հերոսի։ Երբ կարդում էի վէպի մէջ Րախմետովին նուիրված տողերը և իմ գրած շարադրութիւնը նրա մասին, միշտ միևնոյն բացագանչութիւնն էր դուրս թռչում կոկորդից՝ «Ահա այսպէս, Րախմետովի նման պէտք է լինի իսկական հերոսը, նրան պէտք է նմանվեն բոլոր մարդիկ»։ Տարիներ անցան։ Դպրոցական օդային հրաշակերտ կառուցուածքները միրաժի պէս չքացան մի ակնթարթում. նիւթապաշտ իրականութիւնը և գոյութեան համար մղվող անարդար, երբեմն անողոք ու դաժան կռիւը ասացին ինձ, որ Չերնիշևսկիի Րախմետովի դարը դեռ չէ եկել, որ նրանք դեռ չը կան։

II

Բայց սխալ էր իմ այդ եզրակացութիւնը. բանից դուրս է գալիս, որ Րախմետովի նման մարդիկ կան, ապրում են, գործում են, զրկում են իրանց կեանքի վայելքներից, քաղցած են մնում, ընկերներին անդադրում օգնում են, գաղափարի տարածման ճանապարհն են հարթում, խոպան ուղեղներն են մշակում, մութ անկիւններում ճրագն են վառում։ Իրական Րախմետովին ծնել է հայ կեանքը, հայ ազգն է նրանից օգտվել, հայ ազգն էլ կարող է նրանով պարծենալ։ Սիմէօն Զաւարեանն է այդ Րախմետովը, գաղափարապաշտ, ծայրայեղօրէն նուիրված ընկերական գործին, որ աւելի բարձր է, քան անձնականը, իր եսը...

Սիմէօն Զաւարեանին մօտիկից ճանաչողները պէտք է ամենայն մանրամասնութեամբ նկարագրեն նրա կեանքը, գործունէութիւնը, չը մոռանալով և ոչ մի դէպք. պէտք է օր առաջ արձանագրել նրա բոլոր գործերը, արածը և տալ հայ պատանուն. այն ժամանակ նա չի ոգևորվի Չերնիշևսկիի երևակայած հերոսով, ձեռքի տակ կունենայ իրական հերոսի՝ Զաւարեանի կենսագրութիւնը և նրանով կը յափշտակվի, նրան կը դարձնէ իր իդէալը։ Այդպիսով գաղափարապաշտ Զաւարեանի բիւրեղազարդ հոգին անմահ կը մնայ և նոր սերունդը ծանօթ կը լինի իսկական գործչին, ընդօրինակութեան արժանի հերոսին։

Ես սկիզբներում շատ քիչ բան գիտէի Զաւարեանի մասին. երբ նա գործել է Կովկասում՝ ես փոքր եմ եղել. ճանաչեցի նրան միայն մահվանից յետոյ, ինչպէս Ֆրանսիայի էնցիկլօպեդիստ Դիդրօյին նրա աղախինը ճանաչել է միայն մահվանից յետոյ, և բացագանչել է ասացուած դառած յայտնի ֆրազը։ Մինչև այժմ այնքան խօսեցին Զաւարեանի մասին, որ այդքանը բաւական է անտեղեակ մէկին անգամ գաղափար տալու, թէ ով էր Զաւարեանը։

Պէտք է, որ գոնէ նրա մահից յետոյ աւելի լայն շրջաններ ճանաչեն նրան, պարծենան նրանով, այդ գաղափարապաշտի պատկերը միշտ կենդանի պահեն իրանց սրտերում և նրա գործը շարունակեն։

Հայ գաղափարապաշտի պատկերը անմահ է լինելու ամենից առաջ հայի համար. հայն էլ պէտք է անմահացնէ իր անմահ զաւակին և կեանքի հերոսին։

Գ. Տէր-Ռուբինեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Համեստ նուիրատւութիւններ

Շուշի, 20 դեկտ.

Այս ամսիս սկիզբներում այստեղ վախճանվեց Ասրի Այդինեանցը 80 տարեկան հասակում։ Հանգուցեալը բնիկ Քահլ գիւղից է, փոքր հասակից տեղափոխվել քաղաքս նուիրվում է վաճառականակ գործերի։ Այդ ասպարիզում նա, չը նայելով, որ բարձր կրթութեան տէր անձ չէր, իր հմտութիւնով ձեռք է բերում մեծ ժողովրդականութիւն։ Նա ունի արած կտակ, բայց տակաւին յայտնի չեղաւ նրա բովանդակութիւնը։ Հանգուցեալն ունի միայն մի որդի, Ղևոնդ անունով, որ Թիֆլիսում ծխախոտի գործարան ունի «Սափարով» ընկերութեան անուան տակ։ Սա իր հօր յիշատակը յաւերժացրեց հետևեալ նուիրատւութիւնով. 1) 100 ր. նուիրեց ս. Յովհաննէս-Մկրտիչ եկեղեցու չքաւորներին, 2) 144 ր. քաղ. դպրոցի 12 չքաւոր աշակերտների թոշակադրամը, 3) 50 ր. Կ. Հ. Բ. Ընկ. այստեղի ճիւղի գր.-ընթերցարանին, 4) 25 ր. ս. Յովհաննէս-Մկրտիչ եկեղեցու դպրոցի երգեցիկ խմբին, 5) 100 ր. Փահլիւլ գիւղի եկեղեցուն, 6) 100 րուբլանոց մի խաչվառ ս. Յովհաննէս-Մկրտիչ եկեղեցուն, 7) 100 ր. քաղաքիս հայոց Մարիամեան օր. դպրոցին, 8) 100 ր. Թուրքերի Նիկօլաեվսկի դպրոցի չքաւոր աշակերտներին և 9) 100 ր. Թուրքերի մեծ մզկիթին։

Հանգուցեալի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն՝ սրա եղբօրորդի Ն. Այդինեանը նուիրեց տեղիս որբանոցին 10 ր., գօրիսեցի եղբ. Նիկ. և Աստ. Յովակիմեանները 10 ր. նոյն որբանոցին և 10 ր. Թուրքերի Նիկօլայեվսկի դպրոցին։

Պետ.

—

Հայրասպան որդին

Խանքենդ, 17 դեկտ.

Այս օրերս Վարանդայի շրջանի Սղնէք գիւղում հետևեալ զզուելի դէպքն է պատահել։

Այդ գիւղացի Բաղդասար-բէկ Մելիք-Ալլահվերդեանը ապրում է իր մին ու ճար որդի՝ Սանջան-բէկի և իր երկրորդ կնոջ հետ միասին։ Որդին՝ Սանջան-բէկը ձախորդ հանգամանքների շնորհիւ թերևս հոգեկան հիւանդութիւն է ստանում և այդ դրութեան մէջ մնալով անգործ՝ իր հօր վրա է ծանրաբեռնվում, որը նիւթական սուղ կացութեան մէջ է լինում։

Սանջան-բէկին ճանաչելով աննօրմալ մարդ, գիւղացիները միշտ զիջողաբար են լինում վերաբերվելիս նրա հետ, առանց լուրջ ուշադրութեան առնելու նրա երբեմնի իրանց հասցրած վիրաւորանքները. այդպէս, մի անգամ նա իր ազգականներից մէկի գլխին փայտով խփում ու ծանր վիրաւորում է և սակայն մնում անպատիժ։

Վերջին ժամանակներս Սանջան-բէկը կամենալով նոր հագուստեղէն գնել իր համար՝ հօրից փող է խնդրում, սակայն վերջինից մերժումն է ստանում։

Այդ առիթով, հօրից անյայտ, Սանջան-բէկը լցվում է այնքան խիստ չարութեամբ, որ վճռում է վրէժխնդիր լինել ժլատ հօր վերաբերմամբ։ Եւ մի գիշեր քնելուց առաջ մօրից պահանջում է իրանց հին դաշոյնը և երկար «գեօրդան»։ Մայրը, կարծելով թէ չար դևերի դէմ պաշտպանութեան համար է որդին զէնք ուզում, բերում է տանը հին դաշոյնը, և «գեօրդան» դնում որդու բարձի տակ։ Որդու պահանջմամբ՝ գիշերը վառ են պահում և ճրագը։

Յանկարծ գիշերվայ միջոցին որդին վերցնում է դաշոյնը և ամենայն սառնասրտութեամբ իր հօրը քնած ժամանակ դաշոյնով վէրքեր հասցնում նախ գլխին և ապա կուրծքին։ Հայրասպան որդին վիրաւորում է և մօրը, երբ սա կամենում է թոյլ չը տալ իրան, և, թողնելով հօրը արեան լճի մէջ մահվան դէմ կռուելիս, ինքը գնում է Շուշի՝ բարեկամի տունը։

Հետևեալ օրը Բաղդասար-բէկը մեռնում է և գիւղի փոխ-տանուտէրը գնում է Շուշի, հայրասպան Սանջան-բէկին բռնում և բերում յանձնում Խանքենդի պրիստաւին։

Վերջինիս հարց ու փորձի ժամանակ հայրասպանը յայտնել է, որ իր համար հագուստ չառնելու պատճառով է կատարել սպանութիւնը։

Ա. Ասլանեան

Տիկին Շալամեանցի կտակը

Պեատիգորսկ, 17 դեկտ.

Տեղացի յայտնի վաճառական—այժմ հանգուցեալ—Կ. Ս. Շալամեանցի ամուսինը, տ. Շալամեան, որը խոհուն, լուրջ և հասարակական հարցերով հետաքրքրվող մի անձնաւորութիւն է, մօտ օրերս կազմած իր կտակի մի օրինակը յանձնել է տեղիս ծխ. հոգաբարձութեան։ Այդ կտակով, նա իր անշարժ և մեծարժէք տան վաճառումից յետոյ պարտաւորվում է յանձնել տեղիս հայոց եկեղեցուն 5000 ր., որով պիտի շինվի եկեղեցու բակում մի հասութաբեր տուն, որի եկամուտից մի տղայի և մի աղջկայ ուսման վարձը պիտի տրվի տեղական գիմնազիաներում սովորելու։ Մէկն ու մէկի բարձրագոյն կրթութեան գնալիս, առաւելութիւնը պիտի տրվի տղային և հագցվի դարձեալ միայն ուսման վարձը։ Եթէ տունը իր կենդանութեան ժամանակ չը ծախվի, ըստ կտակի, հոգաբարձութիւնը ստանալու է մահից անմիջապէս յետոյ։

Գովելի է յարգելի տիկնոջ բարի գործը և ցանկալի է, որ նա իր արածի արդիւնաւորութիւնը ինքը տեսնի։

Մարգարեանց

120,000 Ր. ՆՈՒԻՐԱՏՈՒԹԵԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(Շամախու Թեմի Թեմ. դպրոցի առիթով)

Բագու, 18 դեկտ.

Ահա մի ամիս է, որ Բագուի հայ հասարակութեան աչքի ընկնող հասարակական գործիչները փնտռում, մտածում են գտնել այն նուիրատուութեան ցուցակը, որը ստորագրել էր տալ 15—20 տարի առաջ՝ հանգուցեալ Խորէն Ստեփանէն յօգուտ Շամախու Թեմ. դպրոցի։

Ոմանք ասում են, որ 300,000 ր. է ստորագրված զանազան անձանց կողմից, ոմանք՝ 200,000 ր.։ Մի քանիսը վկոեն իրանց ստորագրած նուէրի չափը, բայց ընդհանուր, պաշտօնական ցուցակը հրապարակում չը կայ, ցնդել, երկինք է թռել։

Շամախու Թեմի առաջնորդ Անաստա արքեպիս. ներկայումս Բագու գտնվելով աշխատում է վերջացնել Թեմ. դպրոցի խնդիրը, թէ նոր շէնքի, թէ նուէրական և թէ իրաւական կարգերը, բայց, որ ամենագլխաւորն է և ամենաանհրաժեշտը, չը կայ նուիրատուութեան ցուցակը։

Հին ընթերցողները, հայ պարբերական հրատարակութիւններին հետևողները գիտեն, որ դեռ երկու տասնեակ տարիներ առաջ այդ դպրոցի բացման առիթով ահագին բանակռիւ տեղի ունեցաւ բագուաբնակ և շամախաբնակ հայերի միջև, ու բազմաթիւ յօդուածներ, առաջնորդողներ տպագրվեցին այն ժամանակի կովկասահայ մամուլի մէջ։

Բագուեցիք դրամական բոյկոտ յայտարարեցին այս դէպքում, եթէ Թեմ. դպրոցը Շամախուս բացվի. շամախեցիք էլ սպառնացին Պոլոժենիայի յօդուածներով։ Այդ բանակռուողների մէջն էին Գ. Ենգիբարեան, Ս. Սարգիսբէկեան, Մ. Աթաբէկեան, տողերիս գրողը և այլն։

Մինչ լրագրական պատերազմ էր մղվում Թեմի երկու քաղաքացիների միջև, Խորէն Ստեփանէն իր կրակոտ քարոզներով նուիրատուութիւնը մի կողմից շարունակում էր, միւս կողմից բագուեցիներին յորդորում, համոզում, որ դպրոցի տեղը Շամախում լինի, ի նկատի առնելով որ Թեմի առաջնորդանիստ քաղաքն է և շրջապատված է բազմաթիւ հայ գիւղերով։

Նուիրատուութեան գլուխն էր անցել հին բագուեցի Համբարձում Մելիքեան, որը ամեն ջանք գործ էր դնում, որպէսզի դպրոցը Բագւում լինի, իր հայրենի քաղաքում։

Հարցի վերջնական լուծումը մնում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին. և ահա Մելիքեան շտապեց էջմիածին Վեհափառի (Խրիմեան) կոնդակը ստանալու։ Երբ այդ առիթով հեռագրով Բագուից յայտնվեց Շամախի, շամախեցիք արտակարգ ժողով գումարեցին հենց նոյն օրը և ճանապարհի ծախս հանգանակելով Սերգ. Նաջառեանին իբրև ներկայացուցիչ ուղարկեցին նոյնպէս էջմիածին, որպէսզի ճակատ առ ճակատ Մելիքեանի հետ բացատրէ Վեհափառի առաջ դպրոցի տեղի անհրաժեշտութիւնը։

Այդպէս էլ եղաւ. վերադարձաւ Մելիքեան ձեռնունայն, վերադարձաւ և Նաջառեան։

Այդ Թւին Շամախու հայ հասարակութեան ներկայացուցիչն էր (դեպուտատ՝ տեղական իշխանութեան առաջ) հանգ. Աստուածատուր-ապեր Զաքարեանը (բժշկապետ Զաքարեանի հայրը), և Նաջառեանը՝ ներկայացուցիչ Զաքարեանի հասարակութեան անդամների, Միրզոյեանի, իմ և այլոց ներկայութեամբ հետևեալ զեկուցումը արեց.

«Պարոններ, բարոյական յաղթութիւնը Շամախի քաղաքի կողմն է. սակայն, ինչպէս Նապոլէօնն է ասել, հարկաւոր է փող, փող և էլի փող... Բագուի ներկայացուցիչ Մելիքեանը ինչ-որ մի հին կտակի դրամ էր բերել, որը ներկայացրեց Վեհափառին. բացի այդ՝ 120,000 րուբլու էլ նուիրատուութեան ստորագրութիւն, որի գլխում 15,000 ր. Մելիքեանն էր ստորագրել, 10 հազար ր. շամախեցի եղբ. Միրզաբէկեանը և այլք. «Եթէ կը հաստատէք Բագւում բանալ դպրոցը,—ասում էր Մելիքեանը Վեհափառին,—այդ գումարի վրա կաւելացնենք ևս ու կապահովենք դպրոցի ապագան. իսկ եթէ Շամախում լինի դպրոցը, այդ գումարը կը մնայ մեռած, թղթի վրա»։

Ես չեմ ուզում մանրամասնութիւնը գրել Վեհի, Մելիքեանի և Նաջառեանի միջև եղած խօսակցութեան, այլ ի գիտութիւն հետաքրքրվողների յայտարարում եմ, որ 120,000 ր. նուիրատուութեան ցուցակը եղել է Հ. Մելիքեանի մօտ, սակայն այնուհետև ինչ է եղել, ում է յանձնված, էջմիածնին թէ կոնսիստորիային, այդ Մելիքեանի գործն է։

Առ այժմ այդքանը։

Ս. Գարագաշ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մեզ հաղորդում են, որ էջմիածնի ճեմարանի համար մտադրութիւն կայ առաջիկայ տարվանից հրաւիրել այլ անձն Բագրատ եպիսկոպոսի փոխարէն։ Խօսվում է նոյնիսկ կանդիդատի մասին։ Մեր կարծիքով, էջմիածինը մեծ սխալ արած կը լինի, հեռացնելով Բագրատ եպիսկոպոսին։ Եթէ նա միայնակ անկարող է վարել տեսչական պաշտօնը, պէտք է նրան օգնական տալ, այսինքն թողնելով նրան ռեկտորի պաշտօնում՝ հրաւիրել մի այլ անձն իբրև օգնական։ Այն կանդիդատը, որի մասին խօսվում է, արդէն մի անգամ եղել է և նկատվել է անյարմար ու անհամապատասխան. ինչ հարկ կայ նորից փորձել, նորից տեղիք տալ թիւրիմացութիւնների և ներշնչել ժողովրդի մէջ այն կարծիքը, թէ էջմիածնից ոչինչ լաւ բան սպասել չէ կարելի։ Եթէ ճեմարանում նորից սկսվի տիրել այն հակազգային և կործանարար ռեժիմը, որ տիրում էր մի քանի տարի առաջ—դա կը լինի ամենալաւ ապացոյցը հայ ժողովրդի համար, որ պէտք է ձեռք քաշել էջմիածնից, իբրև մի հաստատութիւնից, որ անկարող է պաշտպանել ազգային-եկեղեցական շահերը, և թողնել նրան իր սեփական բաղդին։ Առ այժմ այսքան։ Երբ րոպէն գայ, մենք աւելի գործնական պայքար կը մղենք և, անտարակոյս, մեզ հետ կը լինի հայ ժողովուրդը, որ չէ կամենում այլ ևս թոյլ տալ խաղեր խաղալ իր հաստատութիւնների գլխին։

◆ Նոր-Ջուղայից ստացանք մի քանի գրութիւններ, որոնցից երևում է, որ 1) տեղական դաշնակցականները, կամենալով խափանել Բագրատ եպիսկոպոսի ընտրութիւնը իբրև Պարսկա-Հնդկաստանի Թեմի առաջնորդ (ինչպէս յայտնի է, այդ Թեմի ժողովուրդը կամենում է նրան ընտրել), հրատարակել են Թռուցիկներ, որոնց մէջ ցոյց են տալիս, որ իբր էջմիածնում տիրում է անկարգութիւն, անկանոնութիւն, որ իբր ստեղծվել է այդտեղ մի ծանր մթնոլորտ, որի մէջ կատարվում են խիստ վտանգաւոր գործեր, և իբր այդ ամենի պատճառը Բագրատ և Մատթէոս եպիսկոպոսներն են. 2) թէ այդ Թռուցիկները և թէ «Հորիզոն» թերթի մէջ հրատարակվող կուսակցական միտումնաւոր յօդուածները Բագրատ եպիսկոպոսի դէմ դրվել են Պարսկա-Հնդկաստանի Թեմի առաջնորդական խորհրդարանին հրատարակել բրօշիւրով և տարածել ամբողջ Թեմի մէջ Հ. Առաքելեանի յօդուածները, տպված «Մշակի» մէջ (№№ 211, 213 և 214)։ Մենք ստացանք թէ Թռուցիկների և թէ բրօշիւրի մի-մի օրինակը։ Մենք չը գիտենք, տուե՞լ է Բագրատ եպիսկոպոսը իր համաձայնութիւնը առաջնորդ ընտրվելու համար, բայց կարծում ենք, որ դժուար թէ ներկայ պայմաններում Կաթողիկոսը համաձայնէ արձակել նրան դիւանապետի և ճեմարանի տեսչի պաշտօններից. ուստի աւելի լաւ կը լինէր, որ Պարսկա-Հնդկաստանի Թեմի հայ ժողովուրդը մի այլ եկեղեցականի կանդիդատութիւնը առաջ քշէր։

◆ Ամեն տարիների նման, սովորական ձևով, ստացանք բժշկապետ Ց. Գասպարեանից 100 րուբլի՝ «Մշակի» 10 օրինակ 1914 Թ. ընթացքում ուղարկելու կարիք ունեցող կրթական և ուսանողական հիմնարկութիւններին։

◆ Ստացանք Մոսկվայից՝ Դ. Միսկարեանից 10 րուբլի, «Մշակի» մի օրինակ 1914 Թ. ընթացքում ուղարկելու Շուշու հայ դպրոցներից մէկին, ի յիշատակ հանգուցեալ Մնացական Դ. Միսկարեանի։

◆ Կովկասի փոխարքային ներկայացաւ անդրկովկասեան երկաթուղիների կառավարչի օգնական ինժեներ Զուրաբեանը։

◆ Այսօր Վրաստանի էկզարխը Քրիստոսի Ծննդեան առիթով պատարագ կը մատուցանի զինուորական տաճարում։

◆ Վրաստանի էկզարխ Ալեքսէյ արքեպիսկոպոսը դեկտ. 22-ին փոխարքայի պալատում մեծ ունկնդիրների ներկայութեամբ դասախօսեց Քրիստոսի մարդկային կերպարանք ստանալու գաղտնիքի մասին։ Իր հռետորական շնորհքով նորին բարձր սրբազնութիւնը շատ համոզեցուցիչ կերպով բացատրել է իր դասախօսութեան էութիւնը, թողնելով բոլորի վրա հաճելի տպաւորութիւն։ Դասախօսութեանը ի թիւս այլոց ներկայ էին փոխարքան և կոմսուհին, փոխարքայի երկու օգնականները և այլ բարձրաստիճան անձինք։

◆ Քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի առողջական դրութիւնը ներկայումս ընդհանուր առմամբ բաւարար է։ Ապաքինվումը կատարվում է դանդաղ։

◆ Այսօր, Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում նշանակված է նոյն Ընկերութեան ընդհանուր ժողովը։ Ի թիւս այլ հարցերի որոշվելու է հայոց դպրոցներին դասական պիտոյքներ մատակարարելու հետաքրքրական հարցը։ Այդ գործից առաջացած իւրաքանչիւր տարվայ օգուտը, որ կարտայայտվի մի յայտնի գումարով, կը նշանակվի յօգուտ դպրոցական-ուսուցչական ֆոնդի։

◆ Քաղաքային բժշկա-սանիտարական մասը վերակազմված է։ Խորհուրդը բաղկանալու է 22 մարդուց բժ. Ստեփանեանի ղեկավարութեան ներքոյ։

◆ Քաղաքային վարչութեան տեղեկութիւնների համաձայն, Թիֆլիսի էլեքտրաքարշը 1912 Թ. մարտի 15-ից մինչև 1913 Թ. մարտի 15-ը ունեցել է բոլոր գծերից, բացի Աւճալկիի և Նախալովկայի, արդիւնք տոմսակների վաճառումից ընդամենը 1.049,674 ր. 42 կ., աբօնէմենտներից՝ 102,615 ր. 80 կ., այլ հասոյթներ 556 ր.։ Չերքէզովսկայա գիծը 1911 Թ. դեկտ. 23-ից մինչև 1912 Թ. դեկտ. 12-ը տուել է 124,336 ր. 55 կ., իսկ Նախալովկայի գիծը 1912 Թ. դեկտ. 31-ից առ 30 մայիսի 1913 Թ. 13,954 ր.։

◆ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է Ելիզավէտա Խիչէկէլին հրատարակել ռուսերէն մի օրաթերթ «Тифлисское Театральное Обозрѣніе» անունով, և Վ. Պարամանովին՝ մի պատկերազարդ երգիծաբանական շաբաթաթերթ «Первый бичъ» անունով։

◆ Այժմեան նամակագրոշմների գործածութեան ժամանակը, որ լրանում էր 1914 Թ. յունվարի 1-ին, երկարեցված է անորոշ ժամանակով։

◆ Մինիստրների խորհրդին ներկայացված է օրինագիծ՝ սահմանելու Անդրկովկասի քաղաքներում, որոնց մէջ չը կայ քաղաքային ինքնավարութիւն, ծառայութեան 3-ամեայ ժամանակամիջոց այն անձանց համար, որոնք մտնում են քաղաքային ծառայութեան։

◆ Դերասան Ց. Աբէլեանի խումբը հաստատվել է Բագւում։

◆ Մոսկվայի «Մարտ» թերթի ասելով, յունվարի 15-ին Աւետրական ակումբում ներկայացվելու է «Դեմօն» օպէրան հայերէն։ «Դեմօն», «Դաւաճանութիւն», «Ալէքօ», «Պայացներ», «Աիդա» օպէրաները հայերէն թարգմանութեամբ խաղացվելու են Պետերբուրգում, Ռոստովում, Նոր-Նախիջևանում, Եկատերինօդարում, Բագւում, Թիֆլիսում։

◆ Էջմիածնից մեզ գրում են, որ Ջիւլանիայի առաջնորդ Մատթէոս վարդապետ Ինճէեանի եպիսկոպոսական ձեռնադրութիւնը կատարվելու էր երէկ, դեկտ. 24-ին։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Թոյլատրված է վրաց բեմի վրա խաղալ նորերս վախճանված Անտօն Փուրցելաձէի «Մացի Խվիտիա» գրուածքից պիէսայի վերածված դրաման։ Գրուածքը թատրոնական ներկայացման համար յարմարեցրել է հայազգի դերասան Շ. Սափարովը։

◆ Գանաթլէբա ընկերութիւնը, դեկտ. 28-ին իր օգտին կազմակերպում է պատմական երեկոյթ, որի ժամանակ բեմի վրա կը ցուցադրվի հին Թիֆլիսի կառնավալը, ղէինօբա։

◆ Այս օրերս Քութայիսում մի շարք հասարակական գործիչների մօտ խուզարկութիւններ կատարվեցին, որից յետոյ շատերին ձերբակալեցին։ Երկու օր առաջ նմանօրինակ խուզարկութիւն կատարվեց Քութայիսում լոյս տեսնող ամենօրեայ «Սիտղվա» օրաթերթի խմբագիր Վ. Աբդուլաձէի բնակարանում։ Աբդուլաձէն բանտարկվեց։ Դեկտ. 17-ին ոստիկանութիւնը խուզարկութիւն է կատարել Ջուգրուլի գիւղի ուսուցչի տանը։ Գրաւված են հեռագրեր և նամակներ։

◆ Մարգանէց արդիւնաբերողների խորհուրդը (Ճիաթուրայում) 1914 Թ. ընթացքում միանուագ նպաստների և ուսանողներին տրվելիք օժանդակութիւնների համար յատկացրել է 20,000 ր.։

◆ Մարգանէց արդիւնաբերողների խորհուրդը 1914 Թ. Ճիաթուրայի վրաց դրամատիկ ընկերութեանը նպաստ է տուել 4500 ր., իսկ ժող. համալսարանին 2200 ր.։

◆ Բանաստեղծ Եվդոշվիլին, որ թոքախտով հիւանդ է և գտնվում է Սուխումի սանատորիումում, ներկայումս վտանգաւոր դրութեան մէջ է։ Նրան բժշկողները մտադիր են ռէնտգենեան ճառագայթներով քննել նրա թոքերը և եթէ գտան այն եզրակացութեան, որ հիւանդը կարող է դիմանալ, ապա նրա թոքերը անդամահատութեան կենթարկվեն։

◆ Ռուսաստանի Տոբոլսկ քաղաքի եկեղեցական Թանգարանում գտնվելիս է եղել վրացական մի հազուագիւտ հնութիւն, մի շուրջառ, վրացերէն (խուցուրի) գրերով ասեղնագործված։ Ի նկատի առնելով նրա պատմական նշանակութիւնն ու հետաքրքրականութիւնը, Թիֆլիսի վրացական եկեղեցական մուզէումի վարչութիւնը խնդրում է վերոյիշեալ Թանգարանի վարչութիւնից իրան նուիրել և կամ էժան գնով վաճառել յիշեալ շուրջառը։

ՄԱՄՈՒԼ

Անշուշտ դեռ չէ մոռացված այն տգեղ ու պրօվօկացիոն յօդուածը, որ «Зак. Рѣчь» թերթը լոյս ընծայեց իր համարներից մէկում, և որով կոչ էր անվում վրացիներին, ռուսներին և Թուրքերին միանալ ընդդէմ հայութեան։

Այս առիթով տեղական «Закавказье» թերթի վերջին համարներից մէկում «Մուսուլմանին» ստորագրութեամբ մի յօդուած էր զետեղված, որի մէջ հեղինակը զգուշացնում էր բոլոր նրանց, որոնք աշխատում են հայ-վրացական յարաբերութիւնները լարել և հարցին տալիս են միակողմանի լուսաբանութիւն։ Պ. Մուսուլմանինը նաև շեշտում էր կովկասեան բոլոր ազգերի համագործակցութեան և համերաշխութեան գաղափարի վրա, ընդամին յիշեցնելով հայ-Թուրքական ընդհարումները և նրանից առաջ եկած վնասները, խոստովանելով նաև որ մօտ տխուր անցեալը բաւական խրատական դաս էր մահմեդականների համար, հետևաբար և նրանք երբէք այլ ևս մտադիր չեն սրա կամ նրա ձեռքում կոյր գործիք դառնալ, որով «Закавк. Рѣчь»-ի կատարած բացասական դերը անպտուղ և ապարդիւն կանգնի։

Վրաց «Սախալխօ Գազէթի» թերթը իր № 1073-ում առաջ բերելով մի քանի կտորներ Մուսուլմանինի յօդուածից, իր կողմից աւելացնում է հետևեալ տողերը.

> Պ. Մուսուլմանինի բոլոր այս ասածները կատարեալ ճշմարտութիւններ են, բայց կարող ենք համարձակօրէն վստահեցնել նրան, որ նրա զգուշացումը բոլորովին անտեղի է։ Վրացի ժողովուրդը բաւականաչափ պատրաստ է և այնչափ քաղաքացիական հասունութիւն ունի, որ մտքովն անգամ չի անց կացնի հարևանի վրա յարձակվել։ Եթէ «Зак. Рѣчь»-ից անթոյլատրելի խօսքեր շպրտվեցին, այս բոլորովին այն չէ նշանակում, որ այս լրագիրը որևէ կապ ունենայ վրացի ժողովրդի հետ և կամ ժողովուրդը լրագրի հետ։ Եւ մինչև հայ-վրացական յարաբերութիւնների մասին որևէ բան կը գրէր պ. Մուսուլմանինը, լաւ կանէր, եթէ նախապէս վրացի ժողովրդի կարծիքները և ձգտումները ուսումնասիրէր։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս, 13 դեկտեմբեր

Վերջերս «Մշակի», «Հորիզոնի» և կովկասեան ուրիշ հայ թերթերու մէջ ողբացեալ Ս. Զաւարեանի մահուան առթիւ թեր և դէմ հրատարակութիւններ եղան, Միացեալի անունն ալ—թիւրիմացութեամբ անշուշտ—խառնուելով այդ բանավէճին։ Տնօրէն ժողովս պարտք կը համարի ուրեմն լուսաբանել խնդիրը՝ հերքելով կարգ մը սխալ տեղեկութիւններ, որոնց վրայ հիմնուած է այդ թիւրիմացութիւնը։

Նախ պէտք է ճշդել, թէ ողբացեալ Ս. Զաւարեան ուղղակի կերպով ոևէ դիմում կատարած չէ երբէք Միացեալի մօտ պաշտօն ստանձնելու համար Ընկերութեան շրջանակներէն միոյն մէջ և հետևապէս ալ ստորագրելու համար մեր կողմանէ իրեն թուղթ ներկայացնելու խնդիր չէր կրնար ըլլալ։ Ստոյգ է, որ Միացեալի վերահաստատութեան սկիզբները, երբ Ընկերութիւնը չէր ստացած դեռ իր վերջնական կազմակերպութիւնը և հիմնական կանոնագրէ իսկ զուրկ էր, ողբացեալ Զաւարեան Միացեալի վարիչներէն ոմանց դիմած և իր թեկնածութիւնը դրած էր Տարօնի տեսչական պաշտօնին, բայց այդ բանակցութիւնք անհետևանք մնացած էին, որովհետև Զաւարեան իբրև իր կուսակցութեան հաւատարիմ գործիչ, չէր ուզած բոլորովին նուիրուիլ Միացեալի կրթական գործին և պայման դրած էր գործունէութեան լայն բաժին մը վերապահել իրեն իր կուսակցութեան մէջ, ինչ որ Միացեալի չէր յարմարեր, ի հարկէ, դիւրահասկնալի պայմաններով։

Եւ արդէն Միացեալի պաշտօնին համար իրեն դիմողներու ընտրութեանը մէջ կուսակցականի ու ոչ-կուսակցականի խնդիր չունի երբէք, բաւ է, որ պաշտօն ընդունողը համաձայնի իր ամբողջ ուշադրութիւնը միմիայն կրթական գործին նուիրել, հեռու կենալով կուսակցական ամէն պայքարներէ, որոնք կրթական գործին չէզոքութեանը հետ խոտոր կը համեմատին։ Ասոր ապացոյցն այն է, Միացեալը բազմաթիւ ուսուցիչներ կը համրէ այսօր իր պաշտօնէութեան մէջ, որոնք ազգին մէջ գործող զանազան կուսակցութեանց պատկանելով հանդերձ յանձնառած են իրենց կրթական պաշտօնին նուիրականութեան հետ հաշտեցնել այդ հանգամանքը առանց բողոքի տեղի տալու։

Խորին յարգանօք
Ի դիմաց Հայոց Միաց. Ընկերութեանց
Տնօրէն Ժողովոյ

Ատենադպիր	Ատենապետ
Ց. Իսագուլեան	Ա. Պ. Շմաւոնեան

Յ. Գ.—Կը խնդրուի կովկասեան միւս բոլոր թերթերէն արտատպել մեր սոյն հերքումը։

ԲԱՑ ՆԱՄԱԿ Պ. ԴՐ. ԶԱԼԽՈՒՇԵԱՆԻՆ

Եկատերինօդար, 19 դեկտ.

Յարգելի բարեկամ պ. Զալխուշեան.

Ձեր վերջին յօդուածը՝ «Ի՞նչ է մտածում Մոսկվան» վերնագրով՝ կարող է Թիւրիմացութիւն առաջ բերել, ուստի շտապում եմ ուղղել ձեր սխալը։

Ձեզ ևս քաջ յայտնի էր, որ Եկատերինօդարի հայ ծխական դպրոցը թէ նիւթապէս անապահով վիճակի մէջ էր 50 տարի շարունակ, իր բացման օրից մինչև օրս, և թէ շէնքի կողմից, որը բոլորովին չէ համապատասխանում ներկայ պահանջներին, որովհետև կառուցված է 20 տարի առաջ, երբ աշակերտների թիւը հազիւ 50—60 հոգու էր հասնում։ Այժմ 200-ից անց է, և եթէ յարմարութիւններ լինէին, աշակերտների թիւը կը լինէր անհամեմատ աւելի։ Ահա այս բոլորը աչքի առաջ ունենալով, հոգաբարձութիւնս, որի անդամը լինելու պատիւն ունեմ, դիմեց Մոսկվա վերաբնակված հանգուցեալ Գաբրիէլ Թորոսեանի ժառանգներին, որոնք առանց ձգձգելու անմիջապէս համաձայնութիւն տուին ապահովել մեր դպրոցը տեղական ֆոնդի հիմքը դնելով, տալով մեզ 20,000 րուբլի, որ այդ գումարով պարապ եկեղեցապատկան հողի վրա եկամուտ բերող տուն կառուցվի և նրա եկամուտները ծախսվեն դպրոցի պահպանութեան վրա։ Նրա բարի, ազնիւ օրինակը արձագանք գտաւ հանգուցեալ Ղազ. և Նիկ. Թորոսեանների ժառանգների սրտերում, և սրանք ևս իսկոյն կարգադրեցին, որ իրանց 20,000 ր. միանայ այդ նուէրին, և մենք այժմ ունենք ահագին մի շէնք, որը իր արտաքին գեղեցկութեամբ և ներքին յարմարութիւններով առաջնակարգ շէնքերից մէկն է Եկատերինօդարում։ Ճիշդ է, որ տունը շինված է 48 հազարով, և առայժմ եկամուտը 5000-ից անց է, որ բաւականաչափ ապահովում է մեր դպրոցը, սակայն մենք ունենք «Թորոսեանների» անունով մի լաւ յիշատակ։ Չեմ կարծում, որ դուք, յարգելի բարեկամ, ժխտէք և այն, որ տեղական պէտքերը նմանապէս միանում են ընդհանուր կարիքներին, և եթէ Եկատերինօդարը դպրոցական ֆոնդ ունեցաւ, դա նշանակում է, որ գաղափարը արձագանք գտաւ և այդ արձագանքի տէրերն են Թորոսեանները։ Ի հարկէ Ալէքսանդր և Միքայէլ Աֆանասեվիչները անձամբ ոչ մի կապ չունէին Եկատերինօդարի հետ. նրանք ապրած են Արմաւիրում և այնտեղ անշուշտ երբևիցէ որևէ բան կանեն. իսկ մեր Թորոսեանները մեծ գործ կատարեցին. նրանց անունը միշտ խնկելի կը մնայ հասարակութեան համար, որովհետև նրանք հնարաւորութիւն տուին դպրոցական ֆոնդի հիմքը դնել Եկատերինօդարում։ Իսկ եթէ Մոսկվայում նրանք տուել են ևս 2000, նշանակում է՝ մեր Թորոսեանները տուին ընդհանուր գործի համար 42,000, իսկ այդչափ տուողների թիւը հազուագիւտ է։

Չեմ կասկածում, որ դուք այդ նուիրաբերութիւնը ոչինչի տեղ չէք դնի, ինչպէս չէք կարող չը խոնարհվել այն ահագին գումարի առաջ, որ նուիրեցին ղարաբաղցիք Շուշու դպրոցների ապահովութեան համար։

Թորոսեանները իրանց նուէրի մասին ձայն չեն հանել. նրանք համեստօրէն, սուս ու փուս տուին փողը, և մեր քրտնաջան, շինարար եռանդոտ երէցփոխ Գէորգ Խօջապարոնեանը կէս տարվայ ընթացքում իրագործեց նրանց ցանկութիւնը։ Այժմ գոնէ մուրալու կարիքից տեղիս հոգաբարձութիւնը ազատ է. էլի մի 2000 տարեկան եկամուտ, և մեր դպրոցը ապահով է։ Յոյս կայ, որ կը գտնվեն տեղումս մարդիկ, որոնք և կը տան հնարաւորութիւն շէնք կառուցանելու, և այն ժամանակ Եկատերինօդարի հայոց դպրոցի գործը ոչ նիւթական պակասը կունենայ և ոչ էլ շէնքի անյարմարութիւնը։

Միթէ Երևան, Վաղարշապատ, Աշտարակ հազարներ, հարիւր հազարներ չը կան, որ դուք պահանջում էք Մոսկվայից։

Թող Թիֆլիսը, Բագուն և այլք տան այն, ինչ որ պէտք է տան և կարող են, ապա միայն մենք ենք նախատինքի և ձեր զայրոյթի արժանի։ Մենք արինք այն, ինչ կարող էինք, թող նրանք էլ անեն իրանց անելիքը։

Ն. Սաթունեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԷՅՎԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ ՎԵՐՋԱՑԱՒ

Թաւրիզ, 15 դեկտեմբերի

Տարիներով Ղարադաղի կեղեքիչ խաների բռունցքների ներքոյ ապրելու դատապարտված հայերի դրութիւնը յայտնի է աշխարհին. յայտնի է նաև բէյվանցիների դատը, որոնց ներկայացուցիչները ամիսներով թափառում էին Թաւրիզի փողոցներում։

Վերջապէս Թաւրիզի առաջնորդարանը՝ երկար ու յամառ կռուելուց յետոյ Քէարիմ-խանի հետ՝ տարաւ Բէյվանի գործը, վերջին շրջանում վայելելով նաև ռուսաց հիւպատոսարանի աջակցութիւնը։

«Մշակի» ընթերցողներին յայտնի է, որ սկզբում առաջնորդարանին աջողվեց Քէարիմ-խանից վերցնել իր տուած վնասների փոխարէն 40,000 թումանի թուղթ ռուսաց հիւպատոսարանի ձեռքով։ Ապա Քէարիմ-խանը պահանջեց հինգ վեց գիւղերի հայերից իր 4 տարվայ բահրաները 66,000 թումանի։ Առաջնորդարանը իր ներկայացուցիչների՝ պ. պ. Զ. Նազարբէկեանի, Կ. Աբեանի և Գ. Մելիք-Ազարեանի աշխատութեամբ և միջոցով այդ գումարն իջեցրեց 19,000—12,000 թումանի։ Մնում էր հանել 40,000-ից 12,000-ը և մնացածը պահանջել Քէարիմ-խանից։ Ահա այդ ժամանակ հայերի հաւատարմատար 10 հոգիները՝ օգտվելով առաջնորդի բացակայութիւնից և ծածուկ կաշառվելով խանից՝ մասնաւորապէս առանց առաջնորդարանի գիտութեան հաշտվում են խանի հետ և ռուսաց հիւպատոսարանի հաստատութեամբ գործը վերջացնում։

10 օրից յետոյ Սըրընի հայերը 30 հոգի թափվում են Թաւրիզի առաջնորդարանը և խնդրում իրանց դատը նորոգել, ասելով որ հին հաշտվող հաւատարմատարները կաշառվել են խանից։

Ռուսաց հիւպատոսարանը, համարելով գործը վերջացած, առաջնորդարանի միջնորդութիւնը համարեց կողմնապահութիւն։ Առաջորդը և Զ. Նազարբէգեան՝ լինելով հիւպատոսարանում՝ բացատրեցին հաւատարմատարների դաւաճանութիւնը և Սըղըն գիւղի անուան չը լինելը հաշտութեան թղթի մէջ։

Ահա այս գործը այս կերպ ձգձգվեց 3 ամիս, և Քեարիմ-խանի 14,000 թումանի պահանջը յամառ կռիւներից յետոյ մնաց առանց հետևանքի. և դեկտեմբերի 11-ին խանը ստիպված եղաւ հիւպատոսարանի կնքով հաստատված թուղթ տալ, որ ինքը միանգամայն հրաժարվում է Սըղընից պահանջված հարկերից, բահրայից 1910, 1911, 1912 և 1913 թւականների համար ի գումարի իր հաշւով՝ 14,000 թումանի։

Հայերն էլ իրանց պահանջած ղարաթից ձեռ են քաշում և հաշտվում Քեարիմ-խանի հետ։

Շատ աւելի աչքող հետևանք կունենար քէյվանցոց դատը, եթէ գիւղացոց 10 հաւատարմատարները չը դաւաճանէին վատաբար։ Գիւղացիք գոհ սրտով գնացին իրանց տեղերը։

Հայկազուն

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

Մերսին, 25 նոյեմբ.

◆ Ադանայի մէջ քանիերորդ անգամ ըլլալով վերանորոգուեցաւ Հ. Բ. Ը. Միութեան մասնաճիւղը։ Մասնաճիւղին ատենապետն էր վաղամեռիկ Միսաք Գոյումճեանը (Առանձար)։ Ընդհ. Միութեան Կիլիկիոյ ընդհանուր քարտուղարին ներկայութեամբը ընդհանուր ժողով մը գումարուելով մէկը մեռած և ուրիշ մը հրաժարած անդամոց տեղ ընտրուեցան տեարք Յակոբ Օհանեան և Գէորգ Պօյաճեան։ Յոյս կայ որ, մանաւանդ Ընդհ. Միութեան աջակից համակիրներէն՝ երբեմն կահիրէաբնակ տիար Օհանեանի մասնաճիւղին մէջ մուտքը խթան մը ըլլայ անոր գործունէութեան, և ադանացոց ճակատէն սրբուի իրենց անտարբերութեան արատը։

◆ Երբ մենք Ադանայի վերածնութեան համար անտարբեր կը մնանք, օտարները այնպէս չեն։

Գերմանները, որ անտարակուսելիօրէն Կիլիկիոյ ճակատագիրին տէրերը կը մնան, ահագին ճիգեր կընեն իրենց ազդեցութիւնը և լեզուն տարածելու։ Երբ ֆրանսացիք, այլևս անժամանակ և վնասակար սիստեմով մը, իրենց լեզուի և քաղաքակրթութեան տարածումին հոգը յանձնած են հայոցս ազգային զգացմանց դէմ կռուող լատին կրօնական միաբանութեանց—որոնց գոյութիւնը թերևս հասկնալինք Լիբանանի պէս տեղ մը, ուր ժողովուրդը կաթոլիկ է՝ և հետևաբար հայերէն չհասկրնալովը տուժողը կըլլայ ֆրանսական լեզուն և ազդեցութիւնը—անդին գերմանները ու նոյնիսկ իտալացիք, աւելի հեռատես և իրատես, սկսած են և հետամուտ են աշխարհիկ դպրոցներ բանալու և բնական է թէ պիտի յաջողին։

Ուր էր թէ ֆրանսական կառավարութիւնն ալ ըմբռնէր ժամանակին պահանջը և իր լեզուին ու քաղաքակրթութեան տարածումին հոգը, փոխանակ լատին միաբանութեանց յանձնելու, որ իրենց հակահայ ուղղութեամբը մեր մէջ մէկ-մէկ ֆրանսատեացութեան ազդակներ կըլլան, ինքն ալ բանար կարևոր կեդրոններու մէջ աշխարհիկ ֆրանսական վարժարաններ, և աւելի փոքր տեղերու համար ալ համաձայնէր ուղղակի պատրիարքարանին, Միացեալին և Ընդհանուր Միութեան հետ։ Հայ ամեն կարևոր դպրոցաց մէջ ինքնաբերաբար արդէն ուժ կը տրուի այդ լեզուին։ Որքան արդիւնաբեր պիտի ըլլար ան, եթէ վայելէր նաև աջակցութիւնը ֆրանսական պետութեանը և Ալիանս Ֆրանսէզին։

Մինչ այն արդէն ձեռնարկը եղած է Ադանայի մէջ գերմանական կոլէժի մը սկզբնաւորութեան, որուն տնօրէնն է տիար Աղբալեանը, Սանասարեանի նախկին սաներէն, ուսուցիչներէն և Ադանայի ազգ. վարժարանի անցեալ տարուան տնօրէնը, որ լաւ գերմանագէտ մըն է։

Յիշեալը միանգամայն կը կատարէ նաև Ադանայի գերման հիւպատոսարանի թարգմանի պաշտօնը։

◆ Երկու օր առաջ Տարսոնի մէջ կախաղան հանուեցաւ մահմեդական մը, հինգ տարուայ «կարճատև» դատավարութիւններէ վերջ, որ սպաննած էր իր կինը և զաւակը։

Դիտող

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Երբ Մոսկվա-Պետերբուրգ շրջատեղով անցնում էր կայսերական գնացքը, գիծը պաշտպանող 5 զինուորները ձիւնախառն մրրիկի պատճառով ընկան գնացքի տակ և մահացան, գծի վրա գտնվեցին նաև ուրիշ վեց զինուորի դիակ։

◆ Բուլգարական Ֆերդինանդ արքան մեկնում է Վիէննա, Բերլին և Պետերբուրգ։

◆ Բերլինից հեռագրում են, որ էկս-շահ Մահմէդ-Ալին շուտով վերադառնում է Պարսկաստան։

◆ Պարիզից հեռագրում են, որ Պիեր Լոտին գրական արժանիքների համար պարգևատրվել է Պատուաւոր Լեգէոնի աստղով։

◆ Հռոմից հեռագրում են, որ Վէզուվ հրաբուխը սկսել է գործել։ Վէզուվի շուրջը չեղած փոթորիկ է։ Գալիս են շատ օտարազգիներ։

◆ Երկրագործութեան գլխաւոր կառավարիչ Կրիվօշէինը Լիվադիայից վերադառնալով Պետերբուրգ հիւանդացել է կրծքի հիւանդութեամբ. բժիշկները խորհուրդ են տալիս հիւանդին ապրել հարաւում։ Վարչութիւնը ժամանակաւորապէս կառավարում է կոմս Իգնատիևը։

◆ Ռուսաստանում հրէաների մէջ լուսաւորութիւն տարածող ընկերութեան 50-ամեակը լրացաւ դեկտ. 22-ին։

◆ Պարիզում աչքող փորձեր են կատարվում ուղեղի պրօգրէսիվ անդամալուծութիւնը սալվարսանով բուժելու։

◆ Քիշինէվում, Կրուպէնսկիի զեկուցումից յետոյ, զէմստվային ժողովը որոշեց կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրել սօյուզնիկների վնասակար գործունէութեան վրա, որոնք բաղկացած են գողերից, կողոպտիչներից, հրդեհածիգներից և սրիկաներից, որոնք ընդունակ են իրանց գործունէութեամբ առաջ բերել գիւղացիական շարժում։

◆ Նէջգօտգիսում կայանալու է արաբ ցեղերի և շէյխերի համագումարը՝ միասին քննելու աւտօնօմիայի պահանջները, նաև զինուորական միջոցներ որոշելու՝ այդ պահանջները պաշտպանելու համար, եթէ Բ. Դուռը պահանջած աւտօնօմիան չը տայ։

◆ Պետերբուրգում դարձեալ խօսում են, որ ներքին գործերի մինիստր Մակլակօվը հրաժարական է տալու մօտիկ ապագայում։

◆ Յունաց պրեմիէր Վէնիզէլօսը, պարլամենտական արձակուրդներից օգտվելով, այցելելու է եւրօպական մի քանի մայրաքաղաքները։

◆ Կ. Պոլիս հասան կրկին մի խումբ գերմանացի նոր հրահանգիչներ թիւրք զօրքերի վերակազմութեան համար։

◆ Պետերբուրգի օսմանեան դեսպանութիւնը կտրուկ կերպով հերքում է այն տեղեկութիւնը, որ թէ իբր Ջէմալ-բէյը Կ. Պոլսի մի քանի հայերին յայտնել է կառավարական դեկլարացիայի մասին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

23 դեկտեմբերի

ՀՌՈՄ։ Պալատինում պեղումներ կատարող ինժեները երևան հանեց այսպէս կոչված Mundus sacer, որ նուիրված է եղել Իւպիտէրին և Պրօզերպինին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ցարսկոյէ Սէլօյի պալատում բաղդ ունեցան ներկայանալ Թագաւոր Կայսրին և յանձնել իրանց հաւատարմագրերը աւստրօ-ունգարական դեսպան Տուրն-դէ-Վալսասինը և սերբիական դեսպան Պօպօվիչը, ինչպէս և ռումինական դեսպան Նանօն։

Անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ ֆօն-դէր Ռօպը դառնում է գեներալ-լէյտենանտ՝ նշանակվելով գլխաւոր զինուորական տեխնիկական վարչութեան կառավարիչ։

Ուդելների գլխաւոր վարչութեան պետի օգնական կոմս Նիրօդին հրամայվեց լինել Կայսերական Պալատի մինիստրի օգնական։

ՍՕՖԻԱ։ Զապրաշկօվը նշանակվեց դեսպան Բէլգրադում, Ֆերդինանդի գեներալ-ադիւտանտ Մարկօվը՝ դեսպան Բերլինում, հրաժարված Գէշօվի փոխարէն։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ «Բաւարիա» նաւից անթել հեռագրով տեղեկացնում են, որ «Օկլեագօմա» շոգենաւը խորտակվել է. «Բաւարիան» կարողացել է ազատել նաւապետին, մի քանի օֆիցերների և նաւաստիների մի մասին։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Вотанъ

ЛАМПА СЪ ТЯНУТОЙ ПРОВОЛОЧНОЙ НИТЬЮ ПРОДАЕТСЯ ВСЮДУ.

ՌՈՒՍԱԿԱՆ ԱԿՑ. ԸՆԿ. „ՍԻՄԷՆՍ-ՇՈՒԿԿԵՐՏ“ Թիֆլիս, Գօլօվինսկի պր. 21.

(կ. չ.) 0—20

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սիմէօնովսկայա փող., № 18 (Վօրօնցովի արձանի մօտ)։ Բժշկի բնակարան Սիմէօնովսկայա, № 16.

(չ. ու. կ.) 804. 100—36

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս, (Երլիխեան 606 եւ 914-ով) միզասեռական, վեներական եւ կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։

Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.։

Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչա փող.), տէլէֆօն 11—75.

(չ. կ) 785. 100—34

Առևտր. դպրոց (ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՎ) և Հաշւապահական կուրսեր
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Ընդունելութիւնը և գրաքննութիւնների սկիզբը դպրոցում յունվ. 8-ից—առ. ժամը 8½-ից մինչև ցեր. ժ. 2-ը. իսկ կուրսերում՝ յունվ. 15-ից—առաջին խմբի հետ՝ ժամը 2½-ից մինչև 5-ը երեկ., երկրորդ խմբի հետ՝ ժ. 7½-ից մինչև 10-ը երեկ.։ Վաճառվում են դասագրքեր՝ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՆՑ ՈՒՍՈՒՑՉԻ։ Միխայլովսկի պր. № 17.

(օ. մ.) 1213. 10—1



Ս. ՊԵՏԵՐՍՊՈՒՐԳԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՆԱԼՕՇՆԵՐ

ԹՐԼՈՒԿՕԼՆԻՔ (ԵՌԱՆԿԻՒՆ)

(կ. չ.) 852. 0—23

2 ՏԱՐԻ — ԲԱՑՎԱԾ Է 1914 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ — 2 ՏԱՐԻ

ՆՈՐ ՀՈՍԱՆՔ

Գրական, գիտական, հասարակական և քաղաքական ԱՄՍԱԳԻՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆ		ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	
Տարեկան . . .	7 ր.	Տարեկան . . .	24 ֆր.
Կէս տարվան . . .	4 ր.	Կէս տարվան . . .	15 »
Երեք ամիսը . . .	2 ր. 25 կ.	Երեք ամիսը . . .	8 »

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 80 Կ. ԿԱՄ 3 ՖՐ.

Ամսագիրը լոյս կը տեսնի նոյն ուղղութեամբ և աշխատակիցների նոյն կազմով։ Այս տարվայ վերջին միացեալ համարը բաղկացած է աւելի քան 25 տպագրական մեծադիր թերթից և լոյս կը տեսնի դեկտեմբերի վերջերը։ 1914 թ. № 1-ը լոյս կը տեսնի յունվարի 20-ին։ Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «НОРЪ ОСАНКЪ», Сергіевская, № 14, կամ Tiflis (Caucase), Rédaction de la revue «Nor Ossank»

(կ. չ. ու.) 1187. 5—3

ՄԱՐՄԱՐԵՂԷՆԻ և ՄՕԶԱՅԻԿԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱ-ԱՆԴՐԻԱԳՈՐԾԱԿԱՆ և ՄՕՆՈՒՄԷՆՏԱԼ-ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ա. ՌԻՑՑԻ

Թիֆլիս, Եփիզավէտինսկայա փող., սեփ. տ. № 158. տէլէֆօն 16—38.

Ընդունվում են պատուէրներ վերոյիշեալ աշխատանքների, նոյնպէս և ՄԱՐՄԱՐԵԱՅ-ԲՐՕՆԶԵԱՅ ՖԻԳՈՒՐՆԵՐԻ, ԿԻՍԱՆԴՐԻՆԵՐԻ և ԲԱՐԵԼԻԵՖՆԵՐԻ համար, որպիսի պատուէրները կատարում են առանց կանխավճարի։ Կան մեծ քանակութեամբ զանազան ձևերի մահարձաններ մարմարից, լաբրադօրից և այլ քարերից պատրաստված։

(չ. ու. կ.) 1150. 10—6

Առևտրի եւ Արդիւնաբեր. Մինիստր. իրաւասութեան ներքոյ գտնվող

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
—(ԵՐԵԿՈՆԵՐԸ)—
Ր. Զ. ՌՕՄԱՆԵԱՆԻ
(Հիմնված 1908 թ.)

Թիֆլիս, Չէրքէզովսկայա փողոց (Աճալսկայա), № 47, տրամվ. կայ. մօտ, III հաշտարար Դատար. մօտիկ։

Դասընթացներ 5-ամսեայ, ամենօրեայ պարապմունքներով։
Պարապմունքների սկիզբը յունվարի 8-ից 1914 թ.

Դասընթացքներում պատրաստվում են երկսեռ անձեր արդիւնաբերական և ֆինանսական հիմնարկութիւնների համար. աւանդվում է առևտրական մասնագիտութիւն հաշւապահական և առևտր. գիտութ. վերաբերեալ։ Հաշւապահութեան և թղթակցութիւնների վերաբերեալ գործնական պարապմունքները տեղի ունեն դասընթացքներին կից յատուկ գրասենեակում՝ մայրաքաղաքների կուրսերի օրինակով, պարզ, ռէալ կեանքից առնված նիւթերով (առևտր. դոկումէնտներով և այլ ձևերով) և բարդ ձեռնարկութիւնների՝ ինչպէս արդիւնաբեր-առևտրական, նոյնպէս և բանկային հաշւապահութեան միաժամեայ պարտագիր վարումով։ Պարտագիր առարկաներն են. 1) ա. Հաշւապահութիւն—պարզ, իտալական կրկնակի), գերմ., ամերիկ., ֆրանս., անգլ., կամէրային և ռուս. եռեակ (ամեն մի սիստեմն անցնվում է գործն. աշխատանքի օրինակներով), բ. Հաշւապահութիւն—ընդհ.-առևտր., ֆաբրիկային, գործարանային, բանկային, փոխատու-խնայող. և վարկային ընկ., նաւթարդիւնաբեր., ուսյթա-գործար. և ապահովագր.։ ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՍԻՍՏԵՄ։ 2) Առևտրական բառաբանութիւն։ 3) Առևտրական իրաւունք։ 4) Մուրհակային իրաւունք։ 5) Առևտր. թղթակցութիւն (տեսական և գործն.)։ 6) Թւաբան. համրիչի վրա (առևտր. և մաթեմատ. գործող. համրիչի վրա նորագոյն հեշտ ձևով)։ 7) Գեղագրութիւն (ուղղումն և վերամշակումն ամենավատ ձեռագրի)։ Ոչ-պարտագիր առարկաներ. 8) Ապրանքագիտութիւն։ 9) Սղագրութիւն։ 10) Ռէմինգտօնի վրա գրել։ 11) Ռուսաց լեզու։ 12) Թւաբանութիւն։ Դասատուներ են հրաւիրված մասնագէտներ բարձրագոյն համալս. կրթութեամբ։ Ունկնդիրների և ունկնդրուհիների ընդունելութիւններն ամեն օր կուրսերի գրասենեակում, առ. ժ. 10-ից մինչև ցեր. ժամը 3-ը և երեկ. ժ. 5—8-ը։ Կանոնադրութիւնը և ծրագիրը ուղարկվում են ձրիաբար։

(օ.մ.) 1110. 0—10

ԲԱՑՎԱԾ Է 1914 ԹՒԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍ

Պատկերազարդ երկշաբաթաթերթի (հրատարակութեան 6-րորդ տարի)

Առաջիկայ 1914 թւից «Գիւղատնտեսը» դառնում է Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական Ընկ.-եան հրատարակութիւնը եւ նրա օրգանը։

«Գիւղատնտես»-ում աշխատակցում են մեր գիւղատնտես մասնագէտները, զեմսկի ագրօնօմները, ինստրուկտորները, կօօպերատիվ ընկերութիւնների ներկայացուցիչները և գիւղատնտեսական կեանքին մօտիկ անձինք։

ԲԱԺՆԵԳԻՆԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ		ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ԴՈՒՐՍ	
Տարեկան . . .	3 ռուբլի	Տարեկան . . .	12 ֆրանկ
Կէս տարին . . .	1 ր. 50 կ.	Կէս տարին . . .	6 «

Հասցէն՝ Тифлисъ, въ редакцію «Гюхатнтесъ», контора Армянск. Сельскохоз. О-ва, уг. Н сисянъ и Баронск. ул. կամ Tiflis, Rédaction du journal «Gughatntesse».

(չ. ու. կ.) 1184. 5—4

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միխայլեան պր. 24/2. Տէլէֆօն № 976.

Տալիս են երկու սեռի անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են ռէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտագիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, (ամենավատ ձեռքի ուղղումն), արագագրութիւն. բ.) ոչ-պարտագիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա (ռեմինգտօն և ուր.) և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և դատ-դատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 284 ունկնդիր, որոնցից 53 հոգի իգական սեռից)։

1151. 0—12

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный